

Գիտությունների վաստ. գործիչ
ՊՐՈՖ. Ա. Ա. ՄԵԼԻԿ-ԱԴԱՄՅԱՆ

ԲԾԱՎՈՐ ՏԻՖ

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

616.9

1456

U-45

U-45 - Light - 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704, 705, 706, 707, 708, 709, 710, 711, 712, 713, 714, 715, 716, 717, 718, 719, 720, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 731, 732, 733, 734, 735, 736, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 751, 752, 753, 754, 755, 756, 757, 758, 759, 760, 761, 762, 763, 764, 765, 766, 767, 768, 769, 770, 771, 772, 773, 774, 775, 776, 777, 778, 779, 780, 781, 782, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 808, 809, 810, 811, 812, 813, 814, 815, 816, 817, 818, 819, 820, 821, 822, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833, 834, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 854, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 865, 866, 867, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 882, 883, 884, 885, 886, 887, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 902, 903, 904, 905, 906, 907, 908, 909, 910, 911, 912, 913, 914, 915, 916, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 926, 927, 928, 929, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 943, 944, 945, 946, 947, 948, 949, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958, 959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 971, 972, 973, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 992, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1000

F-Sundown 1/1/8

504.

Գիտությունների վաստ. գործիչ
ՊՐՈՖ. Ս. Ս. ՄԵԼԻԻՔ-ԱՂԱՍՅԱՆ

616.922
Մ-45

ՍՏՈՒԳՎԱՄ Է 1967 Թ

ԲԾԱՎՈՐ ՏԻՖ

1456

A $\frac{1}{2491}$



ZUSAMMEN
GEBEN
1942

Проф. А. А. Мелик-Адамян

СЫПНОЙ ТИФ

(На армянском языке)

Аргиз, Ереван, 1942 г

Գիտութեան վաստակավոր գործիչ պրոֆ. Ա. Ա. ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆԻ «ԲԾԱՎՈՐ ՏԻՑ» գրք-
բույկը ներկա հայրենական սրբազան պատերազ-
մի օրերին ակտուալ նշանակութիւն է ստանում
հերոսական կարմիր Բանակի թիկունքը սանիտա-
րական տեսակետից ամրապնդելու գործում :

Մեր ռեսպուբլիկայի բժշկական աշխատողնե-
րը, ողջ Սովետական Միութեան առողջապահա-
կան փրոնտի բազմահազար աշխատավորների
հետ միասին, հենվելով մեր հայրենիքի հայրե-
նասերների ակտիվութեան վրա, թույլ չեն տա
վարակիչ հիվանդութիւնների առաջացումը,
հիվանդութիւններ, որոնք հատուկ էին անցյալ
պատերազմներին և սրտնք հսկայական վնաս
էին հասցնում թիկունքին ու ռազմականատին :
Սա առանձնապէս վերաբերում է բժավոր տի-
ֆին :

Ռեսպուբլիկայի բժշկա-սանիտարական ցանցի
բոլոր աշխատողները, մեծից մինչև փոքրը, սա-
նիտարական և հակահամաճարակային փրոնտի,
ինստիտուտների ու կլինիկաների, հիվանդա-
նոցների ու պուլիկլինիկաների, կոնսուլտացիա-
ների ու դպրոցների, գյուղական բժշկական
տեղամասերի, ձեռնարկութիւնների արկայան-

ների, կոլլեգային բուժակայի՞ն և մանկաբար-
ձական կայանների աշխատողները պետք է գըլ-
խավորեն մասսաների ակտիվութունը, գործի
կոչեն մեր սանիտարական ակտիվի՞ն (հասարա-
կական սանիտարական լիագործներին ֆաղաֆու՛մ
և գյաւղու՛մ, կոլլեգային բրիգադիւրներին, տը-
ներին, ձեռնարկութուններին, հիմնարկներին, կոլ-
լեոգներին ու սովլեոգներին սանիտարական պոս-
տերին, Կարմիր խաչի դրուժինիկուհիներին ու
ողջ ակտիվին, դպրոցներ՞ի, հանրակացարաննե-
րի սանիտարական կազմակերպութուններին և
այլն), ամենօրյա պայքար մղելու բժավոր տի-
ֆը կանխելու համար, բաղնիքներին, լվացֆա-
տներին, վարսավիճարանոցներին և այլնի նորմալ
աշխատանքի համար :

Անխորտակելի՞ առողջ թիկունք ստեղծելով՝
մենք մոտեցնում ենք գերմանա-ֆաշիստական
գիշատիչների վերջնական ջախջախումը :

Հայկական ՍՍՌ վաստակավոր բժիշկ Գ. Ս. ՊԱՊՈՎՅԱՆ

1. Ի՞ՆՉ Է ԲԾԱՎՈՐ ՏԻՖԸ

Բծավոր տիֆը սուր-վարակիչ և համաճարակային հիվանդութունն է:

Վարակիչ է կոչվում, որովհետև բծավոր տիֆով մարդ վարակվում է բծավոր տիֆով հիվանդ մարդուց, ուրիշ խոսքով, սա նշանակում է, որ այն վայրում և մարդկանց միջավայրում, որոնց հետ շփում է ունեցել հիվանդը, բծավոր տիֆի վարակ է եղել: Բծավոր տիֆը մենք անվանում ենք նաև սուր-վարակիչ հիվանդութուն, որովհետև նա սկսվում է սուր կերպով, միանգամից, տևում է մոտ 2—3 շաբաթ, ուղեկցվելով շատ բարձր ջերմությամբ, ինչպես նաև միանգամից վերջանում է, այլևս չկրկնվելով նույն մարդու մոտ:

Տիֆ բառը ծագում է հունարեն «տիֆոս»

բառից, որ նշանակում է ծուխ, մշուշ, շմե-
ղում: Այս նշանակում է, որ բծավոր տիֆի
դեպքում հիվանդը, որպես կանոն, գտնվում է
չմած, ուշաթափ վիճակում, այսինքն՝ կորց-
նում է գիտակցությունը և դառնացում: Իսկ
բծավոր է կոչվում նրա համար, որ այդ հի-
վանդության դեպքում, նրա սկսելուց մի քանի
օր անց, հիվանդի մարմնի վրա, ցան (բծեր) է
դուրս տալիս: Այս ցանը շատ բնորոշ է, առատ
և հեշտ նկատելի:

Բծավոր տիֆը վաղուց է վեր հայտնի էր
զանազան անուններով, ինչպես «սովի տիֆ»,
«պատերազմի տիֆ», «բանտային տիֆ», «նամ-
բարային տիֆ», «նավային տիֆ», «ոջիլային
տիֆ» և այլն:

Այս բոլոր անունները ցայտուն կերպով ցույց
են տալիս, թե ինչպիսի պայմաններում, որ-
տեղ և ինչ պատճառներ են ազդում բծավոր
տիֆի զարգացման ու տարածման վրա: Երբեմն
բծավոր տիֆը որևէ տեղ ախտահարում է զբե-
թե բոլորին, այնուհետև մի վայրից անցնում է
մի ուրիշ վայր, ընդգրկելով մարդկային նորա-
նոր խմբեր: Այս դեպքում մեներ ասում ենք, որ

սկսվել է բժաշկոր տիֆի համաճարակը: Եվ
այսպես, բժաշկոր տիֆը տարածվում է համա-
ճարակորեն, բռնելով ամբողջ մարզեր, պետու-
թյուններ, երկրներ. ահա թե ինչու բժաշկոր
տիֆը, բացի սուր-վարակիչ հիվանդություն
լինելուց, նաև համաճարակային հիվանդություն
է համարվում:

2. ԲՇԱՎՈՐ ՏԻՓԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պատմության մեջ բժաշկոր տիֆի համաճարակին վերաբերող առաջին տեղեկությունները կապված են պատերազմների հետ: Բժաշկոր տիֆի առաջին նկարագրությունը պատկանում է իտալական գիտնական, պոետ և բժիշկ Ֆրակաստորին, որն ապրելով 16-րդ դարում, տվել է բժաշկոր տիֆի համաճարակի մանրամասն նրկարագրությունը Ֆրանսիական բանակի մեջ, որը 1527 թվականին Լոտրեկի հրամանատարությամբ ուղարկված էր Նեապոլիտանական թագավորությունը գրավելու:

Կարելի է առանց սխալվելու ասել, որ այն

Ժամանակվանից գրեթե բոլոր պատերազմներին
գուղորդում էր այդ դաժան հիվանդության
համաճարակը, և պատերազմներում եղած դո-
հերի մեծ մասը կազմում էին ոչ թե նրանք,
ովքեր մահացել էին զենքից, սպանվել էին ճա-
կատամարտերում, կամ մեռել վիրավորվելուց,
այլ նրանք, ովքեր զոհ էին զենում բժավոր տի-
ֆի համաճարակների դաժան բռնկումներին, ո-
րոնք ծագում էին զորքերի մեջ: Ըստ վիճակա-
գրական տվյալների՝ 1733 թվականից սկսած
մինչև 1865 թվականը Եվրոպայում եղած պա-
տերազմներում մահացել է մոտ 8 միլիոն զին-
վոր, որոնցից միայն $1\frac{1}{2}$ միլիոնը սպանվել է
մարտերում ու մեռել վերքերից, իսկ մնացած
 $6\frac{1}{2}$ միլիոնը մեռել է զանազան հիվանդու-
թյուններից և գլխավորապես բժավոր տիֆից:

Պատերազմներով սուանձնապես հարուստ
19-րդ դարը նպաստեց բժավոր տիֆի տարած-
մանը ամբողջ Եվրոպայում, այդ թվում՝ նաև
Ռուսաստանում: Զինվորական մասերի անվերջ
տեղաշարժումները, բերդերի ու քաղաքների
երկարատև պաշարումները, բնակչության հրո-
կայական մասսաների քայքայումն ու աղքատա-

ցումը պատճառ հանդիսացան զանազան վարակիչ հիվանդությունները և առավելապես բժավոր տիֆի տարածման, և այն երկիրը, որն ավելի աղքատ էր, ավելի անկուլտուրական, կամ վնասված բերքի պահասությունից, այնտեղ բնակչութունն արդեն թուլացած էր, հյուծված, սանիտարական տեսակետից ապրում էր վատագույն պայմաններում, ուստի այնտեղ համաճարակն ավելի ուժեղ էր, ավելի երկարատև ու ավելի ավերիչ:

Հաղթական Փրանսիական բանակը 1812 թվականին Ռուսաստանի դեմ մղած պատերազմում բժավոր տիֆից կորցրեց իր անձնակազմի գրեթե կես մասը, առանձնապես շատ Փրանսիացի ոչնչացավ նահանջի ժամանակ:

Հասկանալի է, որ բժավոր տիֆը չլինայեց նաև ռուսական բանակին: Համաճարակը չսահմանափակվեց միայն բանակով, նա տարածվեց նաև քաղաքացիական բնակչության մեջ և ընդգրկեց հսկայական տարածություններ:

Բժավոր տիֆի մեծ համաճարակ է նկատվել նաև Ղրիմի պատերազմի ժամանակ (1854—1856): Ղրիմից բժավոր տիֆն անցել է Օդեսսա,

Զերնիգովի դավառը, իսկ այնուհետև տարածվել է ամբողջ Ռուսաստանում :

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ (1877—1878) ըստ վիճակագրության տվյալների՝ ռուսական զորքերի մեջ զանազան տիֆերով հիվանդացել է 199·538 մարդ, որոնցից մեռել է 43·985, այնինչ զենքից մեռել է ընդամենը 34·742 մարդ : Բոլոր տիֆերի մեջ առաջին տեղն, անշուշտ, պատկանել է բծավոր տիֆին : Թուրքական բանակում բծավոր տիֆն ավելի մեծ ավերածություններ է դործել :

Պատերազմներից բացի, բծավոր տիֆի համաճարակի զարգացման պատճառը, ինչպես արդեն նշեցինք, եղել են նաև բերքի պակասն ու սովը, որ բացատրվում է մի կողմից սովյալների օրգանիզմի դիմադրողականության թուլությամբ, իսկ մյուս կողմից՝ մի կտոր հաց դառնելու համար բնակչության մասսայական տեղաշարժումներով և կյանքի սանիտարական պայմանների վատթարացումով ու այդ հողի վրա մասսայական ոջլոտության զարգացումով : «Սովի տիֆի» համաճարակներ են նկատվել սովի կողմից ընդգրկված բոլոր վայրերում :

1846—1849 թվականներին սովի տարիներին միայն Իռլանդիայում, այդ ամենից ավելի աղքատ հողագործական երկրում, բծավոր տիֆոյի հիվանդացել է մինչև 1½ միլիոն մարդ:

«Սովի տիֆի» համաճարակն իր բուն առանձնապես հաստատեց ցարական Ռուսաստանում, որտեղ միապետական-կալվածատիրական սեփական աղատորեն զարգանալու հնարավորութիւնն չէր տալիս ժողովրդին, ստեղծում էր ծանր անտեսական պայմաններ, աղքատութիւն, անկուշտութեանութիւն և դոյութիւնն սոսկալի հակասող ջապահական միջոց:

Մինչև առաջին իմպերիալիստական պատերազմը, վերջին 25 տարվա ընթացքում ցարական Ռուսաստանում ամեն տարի բծավոր տիֆոյի հիվանդանում էր միջին հաշվով մինչև 100 հազար մարդ, իսկ որոշ տարիներ՝ էլ ավելի: Ռուսաստանում բծավոր տիֆի զարգացման ու տարածման դործում փոքր դեր չէին խաղում բանտերում կալանավորների մեջ չդադարող բծավոր տիֆի դեպքերը: Կուլտակվածութիւնը, հակասանխորական պայմանները, որոնց մեջ պահվում էին բանտարկյալները, համա-

սարած ոչլոտությունը նպաստավոր պայմաններ էին ստեղծում ոչ միայն չղաղարող դեպքերի, այլև խոշոր բռնկումների համար: Բժավոր տիֆը բանտերում հաղարավոր զոհեր էր տանում: Այստեղից էլ այդ հիվանդությունն ստացել է «բանտային տիֆ» անունը: Իսկ բանտերից այդ հիվանդությունն անցնում էր տեղական բնակչությանը՝ հաճախ ստեղծելով իսկական համաճարակի սպառնալիք: Այսպես, 1908 թ. դարնանը, «բանտային տիֆն» ընդգրկեց Ռուսաստանի 36 նահանգ:

Մինչ ուսումնասիրել Ռուսաստանում բժավոր տիֆը չէր վերանում ոչ միայն պատերազմների, սովի և բերնե-բերան լցված բանտերի պատճառով, այլև այն պատճառով, որ ամբողջ երկիրը համարյա նույնպես բանտ էր հիշեցնում: Հակասանիտարիան, կեղտը, անկուլտուրականությունն ու կուտակվածությունը տիրում էին ամենուրեք՝ քաղաքներում ու գյուղերում: Բազմաթիվ մարդիկ ապրում էին անտանելի բնակարանային պայմաններում—կուտակված, նեղ, կեղտոտ: Հատկապես վատ էին ապրում գյուղերից եկած սևագործ ու սեզոնային բան-

վորները և մեծ քաղաքների բանվորութեան ամենաաղքատ խավերը: Սովորաբար նրանց համար բնակարան էին ծառայում ծայրամասերի նեղ ու կեղտոտ փողոցներում եղած նկուղային հարկերը, գլխերվա ապաստարանները (НОЧЛЕЖКВ): Այստեղ բժավոր տիֆը լավ հող և հարուստ հունձ էր գտնում: Մանավանդ գլխերվա ապաստարանները, որոնք լցված էին անտուն, քաղցած, ոջիլներով ծածկված բնակիչներով, հանդիսանում էին բժավոր տիֆի օջախներ, որտեղից և տարածվում էր այդ հիվանդութեան համաճարակը:

Երբեմն բժավոր տիֆի համաճարակի բռնկման տեղեր էին հանդիսանում նաև զորանոցները, փակ ուսումնական հաստատութիւնները, քարվանսարայները, բանվորների կուտակման տեղերը— նորակառույցները, նավերը և մանավանդ ուխտավորները, որոնք հսկայական մասաներով գնում էին երկրպագելու «սուրբ վայրերը»: Այս բոլորը մի շղթայի օղակներ էին, որոնց միջոցով բժավոր տիֆը Ռուսաստանի մի ծայրից մյուս ծայրն էր անցնում, ամեն տեղ գտնելով իր համար բավականաչափ կենսանյութ

և ախտահարելով հիմնականում ինչպես քաղաքի, այնպես էլ դյուղի չքավորությանը:

Որ բծավոր տիֆն ախտահարում է առավելապես չքավորներին, սրբղ կերպով ասում է վիճակագրությունը: Այսպես, ըստ վիճակագրության, Լոնդոն քաղաքում, բծավոր տիֆի բոլոր դեպքերից չքավորներին ընկնում է 96,76%, իսկ մեր վիճակագրության համաձայն մինչև ուսուցիչները Լենինգրադում 9 տարվա ընթացքում չքավոր դասակարգերին ընկնում էր բծավոր տիֆով հիվանդացումների 96%, ուսուցիչներին՝ 3,2%, իսկ հարուստներին 0,8%-ից պակաս:

Այլևի հաճախ, քան քաղաքներում, բծավոր տիֆը բռնկվում էր դյուղերում, դյուղացիների մեջ, որոնց կարվածատերերը հասցրել էին կատարյալ աղքատության, նրանք ապրում էին սոսկալի հակաառողջապահական պայմաններում, միանգամայն անդրադեռ էին սանիտարական տեսակետից: Այստեղ բծավոր տիֆը դյուղի համար դարձել էր կենցաղային երկվույթ: Այս դրությունը ցարական Ռուսաստանում տևեց այլևի քան 100 տարի: Բծավոր

տիֆլի դեմ պայքարը տարվում էր միայն խոչըր
կենտրոններում — քաղաքներում, իսկ գյուղե-
րում՝ միայն մեծ համաճարակների ժամանակ.
Բժավոր տիֆլը՝ պետական մասշտաբով լիովին
ունչացնելու մասին խոսք անգամ չկար: Միայն
սովետական իշխանության օրով զբվեց բժավոր
տիֆլի լիակատար վերացման հարցը, երբ նա ա-
ռանձնապես բռնկվեց 1918—1921 թվականների
քաղաքացիական պատերազմի ժամանակ:

Ինչպես և պետք էր սպասել, երկարատև դա-
ժան առաջին իմպերիալիստական պատերազմի
և հետագա տնտեսական քայքայումը, ցածր
կուլտուրայի, գյուղացիական բնակչության
դրեթե համատարած անդրագիտության և երկ-
րի սանիտարական հետամնացության պայման-
ներում, պետք է տային իրենց կործանիչ պը-
տուղները:

Աղքատության, խավարի ու կեղտի մեջ դա-
բերով ապրող ժողովուրդը հազարներով պետք
է կոտորվեր բժավոր տիֆլից և ուրիշ վարակի:
հիվանդություններից:

Եվ իրոք, իմպերիալիստական պատերազմի
ու մանավանդ քաղաքացիական պատերազմի

վերջին տարիներին ընթացքում բծավոր տիֆը Ռուսաստանում հսկայական բռնկում ավելց, չտեսնված չափերի հասավ:

Ըստ վիճակագրական տվյալների՝ այդ տարիներին ընթացքում Ռուսաստանում հիվանդացավ ամբողջ բնակչության մոտ $\frac{1}{5}$ -ը, իսկ հիվանդացածներից (մոտ 25 միլիոն) մեռավ մոտ 2 միլիոն մարդ:

Սովետական իշխանությունն այն ժամանակ շատ ջանքեր դործադրեց բծավոր տիֆի համաճարակը հաղթահարելու համար: Վերթխարի լարումով և պայքարի դործի մեջ ներդրավված լայն աշխատավորական մասսաների օգնությամբ հաջողվեց ճնշել այդ դաժան համաճարակը՝ ցարսկան իշխանության, իմպերիալիստական պատերազմի և ինտերվենցիայի այդ տխուր ժառանգությունը:

Վ. Ի. Լենինը համաճարակի ամենակատաղի շրջանում, 1919 թվականին ասում էր, որ անհրաժեշտ է «Ռուսական երկրի երեսից ջնջել բծավոր տիֆը—անկուլտուրականության, աղքատության, խավարի և տղիտության ար-


դյունքը» : Եվ համաճարակը լիկվիդացիայի ենթարկվեց :

Սակայն բժաշկը տիֆը մեզ մոտ վերջնականապես չվերացավ : ՍՍՌՍ տերիտորիայի վրա դեռ մինչև այժմ էլ նկատվում են բժաշկը տիֆի առանձին դեպքեր : Ճիշտ է, հիմա հիվանդանում են ոչ թե հարյուրներ, հազարներ, այլ առանձին քաղաքացիներ, բայց անցյալի փորձից մենք դիտենք, որ, եթե ձեռք չառնվեն ամենակտրուկ միջոցներ, այդ առանձին դեպքերը կարող են համաճարակ տալ : Վ. Ի. Լենինի ավանդը պետք է կատարել :

Մեր երկիրը, որն արդեն վերացրել է անդրադիտությունը և արդեն վերացնում է առանձին տեղերում դեռ ևս մնացած սանիտարական հետամնացությունը, կարող ենք վստահ լինել, որ կկարողանա վերացնել նաև բժաշկը տիֆի ամեն մի հնարավորություն :

3. ԻՆՉՊԵՍ Է ՏԱՐԱԾՎՈՒՄ ԲԾԱՎՈՐ ՏԻՖԸ

Որ բժաշկը տիֆը վարակիչ հիվանդություն է, այդ վաղուց դիտեն, իսկ թե ինչպես է փո-



խանցվում և որտեղ է գտնվում նրա վարակը, վերջերս իմացան: Այժմ գերտուխյան կողմից հաստատված է, որ բժավոր տիֆի վարակիչ սկզբնավորութունը գտնվում է բժավոր տիֆով հիվանդի արյան մեջ և որ բժավոր տիֆով կարելի է վարակվել միայն այն դեպքում, երբ վարակը բժավոր տիֆով հիվանդի արյունից քնկնում է առողջ մարդու արյան մեջ:

Դեռևս նախկին համաճարակները ժամանակ չատ հետազոտողներ մատնանշել էին այն փաստը, որ բժավոր տիֆի վարակը փոխանցվում է հիվանդի զանազան առարկաների, մանավանդ սպիտակեղենի, հազուստի միջոցով, և որքան հազուստը շատ էր կեղտոտված լինում միջատներով, այնքան ավելի արագ էր տեղի ունենում վարակի փոխանցումը:

Լավերանը դեռ 1813 թվականին հետաքրքրական տեղեկութուններ էր հաղորդում, թե բժավոր տիֆը ինչպես էր տարածվում Վրին, քաղաքի հրեաների մեջ, որոնք գնել էին բժավոր տիֆից մեռած ֆրանսիացիների հազուստ: Որ այս հիվանդութունը կեղտոտ հազուստի միջոցով մարդուց մարդուն է անցնում, այդ հե-

տաղտոված էր շատ հեղինակներէ կողմից ,
բայց ոչ ոք չէր վստահում այդ փոխանցումը
կապել ոջիւնների հետ և նրանց համարել վա-
րակէ փոխանցման միակ սկզբնապատճառը :

Բժավոր տիֆլի վարակէ փոխանցման դործում
ոջիւնների ունեցած դերի վերաբերյալ արտա-
հայտված երկչոտ կասկածներն ու հիպոթեզները
սակավ համոզեցուցիչ էին ժամանակակիցների
համար , իրենց վրա չէին դրավում բժիշկների
ուշադրությունը և շատ շուտով մոռացվում
էին : Հետաքրքրական է , որ սրանից դեռ 85
տարի առաջ այս միտքն արտահայտողներից
առաջիններից մեկն էր ոուս ղինվորական բժիշկ
Պրիբիլը , որն աչն ժամանակ աշխատում էր
Կովկասում : Նա նկատել էր , որ ինչքան շատ
ոջիւներ էին լինում ղինվորների վրա , այնքան
շատ էին լինում բժավոր տիֆլի դեպքերը : Նրա
խորհրդով սկսեցին ավելի հաճախ բաղնիք ու-
ղարկել ոուս ղինվորներին ու դերի թուրքերին ,
և այդ բավական եղավ , որպեսզի ղղալիորեն
սլակասի բժավոր տիֆլը : Նրա այս փորձը , ղե-
տողությունները դժբախտաբար մոռացվեցին և
համարյա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում

Նրանց վրա : Նույն միտքն արտահայտեց 1870
Թվականին Օդեսսայի հիվանդանոցում աշխատող
ուռու բժիշկ Մինխը : Եվ միայն 1909 թվա-
կանին Ֆրանսիացի դիտնական Նիկոլը, որ իր
աշակերտներով աշխատում էր Թունիսում,
վերջնականապես հաստատեց, որ տիֆը հիվանդ
մարդուց առողջին փոխանցելու միակ պատճառը
հանգիստնում է շորի ոջիլը : Նա հաստատեց
նաև, որ բժափոր տիֆի վարակը գտնվում է
հիվանդի միայն արյան մեջ, իսկ նրա մյուս
բոլոր արտաթորությունները, այսինքն թուզը,
փսխածքը, մեղրը, կղանքը, եթե նրանց հետ
արյունը չի խառնված, վարակ չեն պարունակում :
Այս բանը նրանք ապացուցեցին բազմաթիվ
փորձերով, արհեստական կերպով ոջիլներ
միջոցով կապիկներին վարակելով բժափոր
տիֆով : Այս հարցում մենք այժմ այլևս չենք
տարակուսում և չկա մեկը, որ ժխտի այդ
միտքը :

Նիկոլի դյուռայից հետո մեզ համար պարզ ու
հասկանալի դարձավ, թե ինչու համաճարակը
բռնկվում էր դիտնալորապես պատերազմների ու
սովի ժամանակ, բանտերում, զորանոցներում

և այլն: Հասկանալի դարձավ նաև այն, թե ինչու տնտեսապես, սանիտարա-կուլտուրական տեսակետից հետամնաց երկիրն առաջին հերթին էր գոհ դառնում բծավոր տիֆի համաճարակին: Վերջապես, գիտենալով վարակի փոխանցման գործում ոջիլները ունեցած դերը՝ դժվար չի լուծել, թե ինչ միջոցներով պետք է պայքարել համաճարակի դեմ և ինչպես ոչընչացնել համաճարակի առաջացման ամեն մի հնարավորութուն:

Գիտնական Նիկոլին հաջողվեց բծավոր տիֆով վարակել առողջ կապիկներին, նրանց վրա փոխանցելով բծավոր տիֆով հելմինթ կապիկները ոջիլները: Իսկ մյուս պարազիտները—վաթսոջիլները, լվերը, մոծակները նրա փորձերում բծավոր տիֆ չէին փոխանցում և միայն ոջիլն էր անփոփոխ կերպով փոխանցողը: Այսպիսով Նիկոլի համար պարզվեց, որ առանց ոջիլի չկա բծավոր տիֆ, իսկ ոջիլն առաջանում է այնտեղ, որտեղ կա կեղտ, անկուլտուրականութուն, չքավորութուն: Այստեղից եզրակացութուն. ուզում ես ոչնչացնել բծավոր տիֆը,

ոչնչացրու կեղտը, անկուլտուրականութունը և դրանց հետ կապված ոջլոտութունը:

Առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ բոլոր պատերազմող կողմերն ստիպված էին հանդիպել բժաշկոց տիֆլին: Հարկավոր էր արագ կերպով ուսումնասիրել այս օտարոտի թշնամուն և ոչնչացնել նրան: Նիկոլի աշխատանքները բոլորին հայտնի էին, կամ կարող է պատահել, Նիկոլի փորձերը բոլորի համար համոզեցուցիչ էին, անհրաժեշտ էր կուտակել փորձ, սեփական դիտողութուններ, և ահա դերմանական ղինվորական բժիշկ Յուրգենսը մարդակեր Փաշխտին հատուկ անդթությամբ փորձեր է անում ոուս ուղմադերիների վրա, որոնք մեծ թվով դերի լինելով դերմանացիների մոտ, հիվանդանում էին սովից, ցրտից, կեղտից ու ոջլոտութունից: Նա մարդկանց վրա կատարած իր փորձերով մեկ անգամ ևս, արագուցուցեց և հաստատեց այն, ինչ մի քանի տարի առաջ արդեն ապացուցել էր Նիկոլը: Է՛լ ավելի դադանաբար վերաբերվեց մի ուրիշ դերմանական բժիշկ նույն իմպերիալիստական պատերազմի ժամանակ Թուրքիայում: Որոշելու հա-

մար, թե բժավոր տիֆով հիվանդի մոտ որտեղ է գտնվում՝ վարակը, նա արյուն է վերցնում բժավոր տիֆով հիվանդներից և ներարկում 310 առողջ թուրք զինվորի, որոնցից բժավոր տիֆով հիվանդանում է 174 մարդ և զարգացած ծանր բժավոր տիֆի հետևանքով մեռնում են 48-ը: Նրանց մեծ մասը հիվանդացավ արյուն ներարկելուց հետո 12—14 օր անց:

Նույնը ապացուցեց նաև ոտա զիտնական պրոֆ. Մոչուևոկովսկին, սակայն ի տարբերություն գերմանական բժիշկներից, պրոֆ. Մոչուևոկովսկին արյուն է վերցնում բժավոր տիֆով հիվանդից և այդ ներարկում իրեն: 18 օրից հետո նա հիվանդանում է բժավոր տիֆի ծանր ձևով: Այս փորձերով անվիճելիորեն ապացուցվեց, որ վարակը գտնվում է արյան մեջ, որ վարակը բժավոր տիֆով հիվանդից տոողջին է անցնում արյան հետ, որ վարակված մարդը միանգամից չի հիվանդանում բժավոր տիֆով, այլ մոտավորապես 12—21 օր անց այն մոմենտից, երբ նրա մեջ է ընկել հիվանդի արյունը և վերջապես, որ վարակի միակ փոխանցողը հանդիսանում է ոչիլը:

Գիտութեան կողմից ստույգ կերպով հաստատված այս բոլոր փաստերը չափազանց կարեւոր նշանակութիւն ունեն ինչպէս հիվանդութիւնը ճիշտ ուսումնասիրելու, այնպէս էլ, առանձնապէս, բժշակոյ տիֆի դեմ պայքարի նըպատակների համար:

Մի բանում միայն թերութիւն կար. դիտնականները երկար ժամանակ չէին կարողանում դանել բժշակոյ տիֆի միկրոբը—հարուցիչը. բոլոր երկրներէ տասնյակ դիտնականներ անդադրում կերպով շարունակում էին իրենց աշխատանքներն այդ ուղղութեամբ:

Վերջ ի վերջո նրանց այդ որոնումները հաջողութեամբ պսակվեցին: Բժշակոյ տիֆի հարուցիչն առաջինը նկարագրեց մեքսիկական դիտնական Ռիկկետսը, իսկ երեք տարի հետո, 1893 թվականին, շարունակելով Ռիկկետսի փորձերը, նույնը նկարագրեց սերբիական դիտնական Պրովաչեկը: Հետաքրքրական է, որ այս երկու դիտնականներն էլ իրենց աշխատանքներէ և բժշակոյ տիֆին ուսումնասիրելու ժամանակ վարակվեցին նրանով ու մեռան:

Ի պատիվ բժշակոյ տիֆի դոհ դարձած այդ

վիտնականներին՝ նրանց հայտնագործած բծավոր տիֆի հարուցիչն այժմ կոչվում է «Ռիկկեստի-Պրովաչեկի» :

Ռիկկեստը և Պրովաչեկը բծավոր տիֆի հարուցիչը գտնում էին բծավոր տիֆով վարակված ոջիւնների աղիներում . հիվանդի արյունը վարակ է պարունակում արդեն հիվանդանալու առաջին օրերին :

Հենց որ հաստատվեց բծավոր տիֆը ոջիւնների, գլխավորապես շորի ոջիւնների միջոցով փոխանցվելու փաստը, բոլոր երկրների վիտնականներն սկսեցին ուսումնասիրել ոչ միայն փոխանցման եղանակները, այլ և ոջիւնների կյանքի բոլոր կողմերը, զարգացումը, կառուցվածքն ու տարածումը : Այս տեղեկությունները չափազանց էական էին ու կարևոր : Դրա վրա շատ ժամանակ ու աշխատանք դրին ինչպես մեր, այնպես էլ մյուս երկրների գիտնականները և ներկայումս կարելի է ասել, որ գիտությունը բավականին լավ է ուսումնասիրել այդ, ըստ երևույթին չափազանց անմեղ, բայց դժբախտաբար մարդու սոսկալի թշնամի պարազիտը : Ոջիւնների ուսումնասիրության դժբախտ հատկա-

պէս շատ բան արին ուսն գիտնականները՝ ա-
կադեմիկոսներ Խոլոպկովսկին և Պավլովսկին:

Մարդու մարմնի վրա ապրում են երեք տե-
սակ ոջիլ՝ գլխի, ցայլի և շորի: Առաջին եր-
կու տեսակն ապրում են մազոտ մասերում՝
գլխին, մորուքին և ցայլին. հենց այդ տեղ էլ
նրանք դնում են իրենց ձվերը՝ ամրացնելով
նրանց մազերին: Շորի ոջիլն ապրում է մար-
դու ոչ թե մարմնի, այլ հագուստի վրա, մանա-
վանդ կարերում և ծալքերում: Հենց այդ ծալ-
քերի մեջ էլ նրանք դնում են իրենց ձվերը
(անիծները): Ոջիլները շատ արագ կերպով են
բազմանում և մաքրության ու լուսնալու բա-
ցակայության դեպքում մարդ կարող է բոլո-
րովին ոջլոտվել, ինչպես այդ նկատվում էր ա-
ռաջին իմպերիալիստական պատերազմի ժամա-
նակ խրամատներում գտնված զինվորների վրա:

Թե մարդու վրա ոջիլներն ինչ չափի կարող
են հասնել, ցույց է տալիս ավստրիական երկու
բժիշկների հաղորդումը: Նրանք գրում են, որ
անցած իմպերիալիստական պատերազմի ժամա-
նակ հիվանդանոցներից մեկի սանիտարները,
այդ հիվանդանոց բերված 120 ուղիղազերիները՝

վրայից հավաքել են մոտ 15 կելո ոջիլ, այսինքն միջին հաշվով 130 դրամ ոջիլ յուրաքանչյուրից :

Ոջիլների բոլոր երեք տեսակներն էլ, որոնք պարազիտուլթյուն են անում մարդու վրա, ապրում են բացառապես նրա արյունով: Սպիտակեղենի, հաղուստի ծալքերում ապրող շորի ոջիլը սովորաբար օրական 2—3 անգամ անցնում է մարդու մարմնի վրա կերակրվելու համար. ծծելով մոտ 4—7 բուպե, նա նորից վերադառնում է սպիտակեղենի վրա և այնտեղ մնում մինչև հաջորդ կերակրվելը: Դրա շնորհիվ, սովորաբար համարում են, որ շորի ոջիլից ազատվելն ավելի հեշտ է, քան գլխի ոջիլից: Ոջիլների շատ լինելու դեպքում նրանք երևան են դալիս նաև մարդու վերնազգեստի վրա, մանավանդ օձիքի վրա, և այդ ժամանակ վազոններում, մարդկանց կուտակման տեղերում, նեղվածք լինելու ժամանակ նրանք հեշտությամբ են անցնում մեկից մյուսի վրա:

Ոջիլները վերին աստիճանի դիմացկուն են և կենսունակ, նրանք կարող են մինչև 10 օր ապրել առանց սննդի, մինչև 2 օր ապրել ջրի մեջ:

Նրանք չեն դիմանում) բարձր ջերմաստիճանի :
 90—110 աստիճան տաքությունը սպանում է
 նրանց : Նրանց համար ամենևին հաճելի է լի-
 նել 40 աստիճան տաքություն ունեցող հիվան-
 դի վրա , ահա այդ պատճառով էլ , եթե նրա
 կողքին նորմալ տաքություն ունեցող մարդ կա ,
 ոջիլները հաճույքով նրա վրա են անցնում :
 Ոջիլները չեն դիմանում մի քանի դազերի , հո-
 տերի : Ոջիլը չի կարողանում սողալ յուզով օ-
 ծած մաշկի վրա , այդ պատճառով մաշկը յու-
 դերով ու հոտավետ նյութերով օծելը հայտնի
 էր որպես ոջիլներին վախեցնելով փախցնելու
 միջոց և լայնորեն կիրառվում էր դեռևս հնա-
 դույն դարերում : Այսպես , օրինակ , վերջին հա-
 մաճարակի ժամանակ նկատվել էր , որ Բաքվի
 նավթային բանվորները քիչ հիվանդացան բժա-
 վոր տիֆով . ըստ երևույթին նավթի ու կերո-
 սինի հոտը , յուզոտ մաշկը փախցնում էին ո-
 ջիլներին :

Ոջիլները տարբերում են մարդու հոտը կեն-
 դանու հոտից : Որոշ մարդկանց վրա ոջիլները
 չեն ապրում , որովհետև նրանց մարմնի հոտը
 վանում է ոջիլներին :

Որպէսզի արյունը չմակարդվի և ավելի հեշտ ծծվի, կծելու ժամանակ ոջիլն իր խայթոցի կողքին գտնված դեղձերից վերքի մեջ է թափում մի հատուկ հեղուկ—թուր: Այս թուրը թունավոր է, զրգռում է մաշկը, այդ պատճառով դեպի կծած տեղը շատ արյուն է հոսում և կարմրում է, միաժամանակ առաջացնում է նաև քոր, իսկ քորած տեղում զարգանում են զանազան մաշկային հիվանդութիւններ:

Արյան հետ միասին ոջիլը բծավոր տիֆով հիվանդից իր աղիների մեջ է ընդունում վարակ, այսինքն միկրոբներ: Միկրոբներն այնտեղ չեն ոչնչանում, ինչպէս այդ նկատվում է լվի, վաշտոջիլի մոտ, այլ ուժգին կերպով զարգանում են:

Սրանից հետևում է, որ շորի ոջիլը հանդիսանում է ոչ միայն բծավոր տիֆի վարակի հասարակ մեխանիկական փոխանցողը, այլև նրա իսկական միջակա տերը և բծավոր տիֆով հիվանդի արյունն ծծած շորի ոջիլը սովորաբար ինքը հիվանդանում է բծավոր տիֆով: Նիկոլի, իսկ այնուհետև ուրիշ դիտնականները հե-

տազա փորձերով հաստատովեց նաև այն, որ
հիվանդեցից արյուն ծծած ոջիլը միանգամից չի
հիվանդանում ու վտանգավոր դառնում մարդու
համար, այլ միայն 3—5 օրից հետո, այնու-
հետև մինչև իր կյանքի վերջը, մոտ 3—4 չա-
բաթ պահում է իր վարակելիութունը: Են-
թադրվում է, որ այսպիսի վարակված մեկ ո-
ջիլի խոչընդոտ բնական է բծավոր տիֆ առա-
ջացնելու համար:

Ճիշտ է, մեծ համաճարակի ժամանակ հի-
վանդների և միաժամանակ ոջլոտ հիվանդների
մեջ ապրողներից և նրանց խնամողներից ոմանք
մինչև վերջն էլ առողջ են մնում, չնայած շա-
րունակ ոջիլներ են վերցնում իրենց վրայից.
այդ բանը բացատրվում է նրանով, որ տվյալ
մարդն ունի բնական անզգայունակութուն,
ինչպես մենք ասում ենք՝ իմունիտետ ունի:
Այսպիսի մարդիկ չափազանց քիչ են, կամ հնա-
րավոր է, որ նրանք մանկական հասակում,
անցյալներում արդեն տարել են այդ վարակը:

Բծավոր տիֆով մեկ անգամ հիվանդացած
մարդը, որպես կանոն, երկրորդ անգամ չի հի-
վանդանում այդ հիվանդությամբ, ինչքան էլ

որ նրան ծծեն վարակված ոջիւնելը: Նշանա-
կում է նրա օրդանիզմում հաստատունը իմունի-
տետ է գոյանում: Սակայն լինում է և այսպես,
որ, չնայած շուրջը մոլեգնող համաճարակին,
սրէ մեկը երկար ժամանակ չի վարակվում,
բայց վերջ ի վերջո նա ևս վարակվում է ու
հիվանդանում: Այսպիսի դեպքեր հաճախ էին
նկատվում 1918—1921 թվականների համաճա-
րակի ժամանակ:

Այսպիսով մենք արդեն դիտենք, որ բժավոր
տիֆը հիվանդից առողջ մարդուն է անցնում
չորի ոջլի կծելու միջոցով, բայց անհրաժեշտ
է նաև լավ հիշել և դիտենալ, որ վտանգավոր
են ոչ միայն ոջիւնները, այլ և նրանց անիծները,
որոնցից դուրս են դալիս նոր պարազիտներ:
Հաստատված է նաև, որ մարդ կարող է վա-
րակվել ոչ միայն վարակված ոջլի կծելու մի-
ջոցով, այլ և նրան ճիւղելու և մաշկի փոքրիկ
վերքերին քսելու միջոցով, որ հաճախ տեղի է
ունենում չանդովածքների և մաշկային փոքրիկ
վերքերի դեպքում:

Եվ այսպես, այն, ինչ որանից 15—20 տարի
առաջ դեռևս վիճելի էր, այժմ պարզ ու անվի-

ճելի է դարձել: Պատերազմի դառն փորձով մենք համոզվեցինք, որ բծավոր տիֆի տարածման գործում ոջիւնների ունեցած դերի մասին գիտնական Նիկոլի դիտողությունները ճիշտ էին:

Ոջիւնների դերը պարզելու հետ միասին սկսեցին մշակել և տալ նաև ոջլոտության դեմ պայքարի միջոցները: Արդեն գոյություն ունի միջոցառումների մի ամբողջ սխեմա, որի նըպատակն է բնակչությանն ազատել այդ վտանգավոր պարադիտներից: Եվ եթե դեռ մոտիկ անցյալում ոջիւր մեզ մոտ, մանավանդ գյուղացիական բնակչության մեջ կենցաղային երեվույթ էր հանդիսանում, ապա այժմ կյանքի նոր կառուցվածքի, երկրի սանիտարական կուլտուրայի բարձրացման պայմաններում, ոջիւն ու բծավոր տիֆը պետք է անցնեն անցյալի դերիկը: Սովետական Միության մեջ նրանք տեղ չպետք է ունենան, պետք է անհաշտ պայքար հայտարարել նրանց դեմ:

4. ԻՆՉՊԵՍ Է ԸՆԹԱՆՈՒՄ ԲԾԱՎՈՐ ՏԻՑԸ

ՈՂԼԻ ԿԾԵԼՈՒ միջոցով վարակված մարդը միանգամից չի հիվանդանում բժամոր տիֆով: Վարակվելու, այսինքն ոՂԼԻ ԿԾԵԼՈՒ և հիվանդության առաջին հատկանիշները երևան դալու միջև անցնում է 12—21 օր. այս դադարն է շրջանը, երբ ինֆեկցիան միկրոբներն օրգանիզմում հասունանում և բազմանում են, կոչվում է ինկուբացիոն շրջան: Ճիշտ է, այս դադարն է շրջանի վերջին օրերին մի քանի հիվանդներ ցուցաբերում են թեթև հոգնածություն, ընկած սրամազրություն, վատ քուն, գլխացավ, ցամեր դատկատեղում և այլն, բայց այդ սովորաբար թույլ արտահայտված երևույթներն վրա թիչ ուշադրություն են դարձնում:

Այս շրջանից հետո հիվանդությունը միանգամից սկսվում է ուժեղ դողով, ջերմաստիճանի բարձրացումով ու գլխացավով: Ջերմությունն արագ կերպով հասնում է մինչ 39—40 և այլևի բարձր աստիճանի և այդ թվերի վրա մնում է մինչև հիվանդության վերջը, միջին հաշվով 12—14 օր: Բոլոր հիվանդները, շատ

Հազվադեպ բացառութեամբ, Հիվանդութեան
 առաջին օրերէն դանդատովում են տանջալի գըլ-
 խացավերից: Շատ շուտով այդ ցավերին միա-
 նում են ստորին վերջույթներէ, մանավանդ
 սրունքօճակնային մկաններէ և դոտկատեղի ցա-
 վերը: 4—5-րդ օրը ցան է երևում սկզբում
 կրծքի, փորի վրա, այնտեղից անցնում է մեջ-
 քի և վերջույթներէ վրա: Յանն սկզբում զար-
 դանում է թորոցի գլխի մեծութեամբ, աստիճա-
 նաբար անցնելով հեմորրագիայի: Հազվադեպ է
 լինում, որ բծավոր տիֆով Հիվանդի վրա ցան
 չլինի: Այս ցանը հեշտութեամբ է աչքի ընկ-
 նում, հեշտ է տարբերել ուրիշ Հիվանդութեան-
 ների, ինչպէս օրինակ՝ թութեչի, կարմրուկի,
 որովայնատիֆի ժամանակ եղած ցաներից, այդ
 պատճառով դիագնոզը որոշելու համար այս
 ախտանիշը շատ արժեքավոր է բժիշկի համար:

Հիվանդի դեմքը կարմիր է, շնչառութեանն ու
 պոչըսը արագացած: Հիվանդի դրութեանն օրե-
 ցօր ավելի ու ավելի վատթարանում է: Խորը
 խանգարումներ են նկատվում կենտրոնական
 ներվային սխտեմում: Արդեն առաջին օրե-
 րից սկսված համառ գլխացավը, անքնութեան-

նը, շատախոսությունը, հուզմունքը, երբեմն
հիվանդի հոգեկան անհանգիստ վիճակը երկրորդ
չաբաթվա սկզբից աստիճանաբար փոխարինվում
է քնկոտությամբ, ուժասպառությամբ և գի-
տակցության կորուստով: Այս շրջանում սրտի
գործունեությունն ավելի է վատանում. հիվան-
դը շատ ծանր հիվանդի տպավորություն է
թողնում: Այս ծանր պատկերն օրգանիզմի թու-
նալորման արդյունքն է այն թուլներով, որոնք
այդ ժամանակ արտադրում են հիվանդի արյան
մեջ եղած հսկայական քանակությամբ բծավոր
տիֆի միկրոբները: Այս թուլները գտնվելով
արյան շրջանառության մեջ՝ թունավորում են
բոլոր օրգանները—երիկամները, լյարդը, թո-
քերը, բայց առանձնապես ուժեղ կերպով այն
անոթների պատերը, որոնց միջով հոսում է
արյունը, սիրտը և ներվային սխառեմը:

Այսպիսի ծանր դրությունը բծավոր տիֆի
ժամանակ շարունակվում է մոտ 2 շաբաթ, ու-
րից հետո, եթե ոչ մի բարդություն չի լի-
նում, ջերմությունը 1 կամ 2—3 օրվա ընթաց-
քում ընկնում է մինչև նորման, գիտակցու-
թյունը պարզվում է, ցանը դունատվում և

անհետանում է, աստիճանաբար նվազում են բո-
լոր ծանր ախտանիշները և հիվանդն սկսում է
կամաց-կամաց կազդուրվել: Սակայն առողջու-
թյան լրիվ վերականգնումը շուտ չի լինում:
Միայն ջերմությունն ընկնելուց 2—3 շաբաթ
անց հիվանդն ի վիճակի է թողնել անկողինը:
Այդ դեռ հիվանդության թեթև ու միջակ ձևե-
րի դեպքում, իսկ ծանր դեպքերից հետո ապա-
քինումը երբեմն ձգձգվում է 2—3 ամիս և ավելի:
Եվ այս բոլորը մի ոջլի կծեւու հետե-
վանքով:

Բժավոր տիֆի ծանր դեպքերը զանազան բար-
դություններ են տալիս՝ թոքերի, երիկամների
բորբոքում, ուղեղի բորբոքում, և յուրաքան-
չյուր այդ բարդություններից հիվանդը կարող
է մահանալ, իսկ առողջանալու դեպքում, ամեն
մի բարդությունից հետո նրա մոտ կարող
են հետքեր մնալ ամբողջ կյանքի ընթացքում:

Բժավոր տիֆով հիվանդանում են բոլորը,
թե՛ ծերերը և թե՛ երիտասարդները: Երեխա-
ներն, այնուամենայնիվ, ավելի պակաս: Հի-
վանդանում են առավելապես աշխատանքային,
երիտասարդ հասակում, այսինքն նրանք, որոնք

ավելի շատ են հանդիպում միմյանց, ճանապարհորդում են երկաթուղիներով, մասնակցում են պատերազմներին և այլն: Երեսնաների մահացությունն աննշան է. միջին հասակում մահացության տոկոսը բարձրանում է, 40 տարեկանից սկսած հիվանդները տալիս են մահացության բարձր տոկոս: Ընդհանրապես կարելի է ասել, որքան ավելի առողջ ու ամրակազմ է մարդ, որքան ավելի քիչ է հյուծված նախընթաց հիվանդություններից, կյանքի ծանրությունից, թերսնումից, այնքան ավելի շատ են առողջանալու շանսերը, այնքան օրգանիզմն ավելի հեշտ է հաղթահարում բծավոր տիֆի վարակին: Բծավոր տիֆն առանձնապես վտանգավոր է ողելից խմիչքներ գործածող մարդկանց համար: Հաստատված է, որ մահացությունը բծավոր տիֆից հատկապես մեծ է խլմողների մեջ: Հաստատված է, որ տղամարդիկ բծավոր տիֆն ավելի դժվարությամբ են տանում, քան կանայք: Մահացության տոկոսի տեսակետից, ինքնին հասկանալի է, որ մեծ նշանակություն ունեն համապատասխան խնամքը և պայմանները: Հիվանդը որքան շուտ է

ընկնում լավ բարեկարգ հիվանդանոց, որտեղ նա պատշաճ, լավ ու ժամանակին խնամք և բուժում է ստանում, բնականաբար այնքան աճելի ցածր է մահացությունը:

Բժափոր տիֆով մեկ անդամ հիվանդած մարդն այլևս նրանով չի հիվանդանում, իսկ եթե լինում են երկրորդ անգամ հիվանդանալու դեպքեր, ապա չափազանց հազվադեպ:

Սովորաբար բժափոր տիֆով հիվանդանում են ձմռանը, իսկ համաճարակները դարբանում են ձմեռվա երկրորդ կեսին և դարձան սկզբին: Այս հանդամանքը բացատրվում է բացառապես նրանով, որ ձմռանը, ցուրտ եղանակին մարդիկ կուտակված են աղբում, միասին քնում, տաք հաղնում և այդ պատճառով ստեղծվում են ոջիլների աղբելու, բազմանալու և տարածվելու բոլոր պայմանները, այսինքն մեկից մյուսին հեշտությամբ անցնելու հնարավորությունը:

Եթե բժափոր տիֆը նորմալ է ընթանում, նրան ճանաչելը դժվար է: Դժվար է լինում որոշել բժափոր տիֆին եղակի և առաջին դեպքերը, եթե տվյալ վայրում դեռ չկա բժափոր

տիֆլի դրանցոված ոչ մի դեպք: Այդ պատճառով
համաճարակի սկզբին և հիվանդութեան առա-
ջին օրերին բժավոր տիֆլի ստույգ ղեկանողը
չփվար է և որոշ փորձառութեան ու հատու-
թեան է պահանջում բժշկից: Իսկ թե որ-
քան կարևոր է հիվանդութեան առաջին դեպ-
քերը բաց չթողնելը, որքան կարելի է
վաղ ղեկանողելը, արագ կերպով միջոց
ձեռք առնելը, հիվանդին մեկուսացնելու,
նրա վրայի ոջիլները ոչնչացնելու համար, այդ
ինքնին հասկանալի է: Ամենից ավելի հաճախ
բժավոր տիֆլը շիոթում են որովայնատիֆի,
պարատիֆի, հետադարձ տիֆի, մալարիայի,
սեպտիա, կարմրուկի, մենինգիտի և դարձյալ
մի քանի ուրիշ հիվանդութեանների հետ, ո-
րոնք առաջին օրերին կարող են տալ բժավոր
տիֆին մոտավորապես նմանվող հիվանդութեան
պատկեր: Բժավոր տիֆլի օգտին է խոսում, ան-
չուչտ, հանկարծակի սկսվելը, շատ ուժեղ գլը-
խացավը, որն առանձնապես սաստկանում է
4—5-րդ օրը, ցանը: Բաց, ինչպես արդեն ա-
սացինք, լինում են դեպքեր, երբ այդ ախտա-
նիշները լավ արտահայտված չեն լինում և այդ

Ժամանակ դիտպանողը դնելու գործում վճռական
դեր է խաղում հիվանդի հետագա դիտողու-
թյունն ու արյան հետազոտությունը՝ վեյլ-
Ֆելիքսի սեակցիայի միջոցով: Այս սեակցիան
հիշեցնում է որովայնատիֆի ժամանակ եղած
սեակցիան, որը զգալիորեն ավելի վաղ հայտ-
նագործել է Փրանսիացի դիտնական Վիդալը:
Դա կայանում է նրանում, որ եթե որովայնա-
տիֆով հիվանդից վերցնենք մոտ 2—3 թեյի
գդալ արյուն և թողնենք, որ մակարդալի, կը-
տեսնենք թափանցիկ, թեթևակի դեղնավուն մի
հեղուկ—չիճուկ: Եվ ահա, որովայնատիֆով հի-
վանդի այս չիճուկը, խառնված լինելով որո-
վայնատիֆ առաջացնող միկրոբների հետ, այդ-
դում է նրանց վրա և շատ շուտով կպցնում
մեկը մյուսին, որ լավ նկատելի է միկրոսկոպի
տակ: Իսկ եթե չի կպցնում, նշանակում է
ամյալ հիվանդը, որից արյուն է վերցրած, ո-
րովայնատիֆով հիվանդ չէ: Նույն բանն արին
այստորիական երկու բժիշկ Վեյլը և Ֆելիքսը
1915 թվականին իմպերիալիստական սլատերազ-
մի ժամանակ: Նրանք բժաշկոր տիֆով հիվան-
դի մեղից դատեցին հատուկ միկրոբ, որը կըպ-

չում է բժաւոր տիֆով հիւանդի արյան շի-
ճուկ ամելացնելուց: Եթե հիւանդը բժաւոր
տիֆ չունի, միկրոբները չեն կազում, իսկ եթե
կազում են, նշանակում է նա հիւանդ է բժա-
ւոր տիֆով:

Վեյլի և Յէլիքսի այս դոկտոր մեծ նշանակու-
թյուն ունի և անդնահասակի ծառայություն է
մատուցում բժիշկներին բոլոր կասկածելի դեպ-
քերում, և, ինչպէս արդէն վերն ասացինք, ոչ
միայն կլինիկական նշանակություն ունի, այլ
և նույն չափով նշանակություն ունի հակահա-
մաճարակային միջոցառումների համար բժա-
ւոր տիֆի դեմ մղվող պայքարում:

5. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ԲԾԱՎՈՐ ՏԻՖՈՎ ՀԻՎԱՆԴՍՑԱԾԻ ՀԵՏ

Յուրաքանչյուր բժաւոր տիֆով հիւանդի
անհրաժեշտ է անմիջապէս տեղաւորել հատուկ
հիւանդանոցում: Այդ անհրաժեշտ է, նախ հենց
իր՝ հիւանդի համար, որովհետև տանն ինչքան
էլ լավ խնամեն, այնուամենայնիւ հատուկ

բուժական հիմնարկում խնամքն ու բուժումն
ավելի լավ կլինի, որն ապահովում է նաև ա-
մեն տեսակի բարդություններից և՛ բարձրաց-
նում առողջանալու շանսերը, իսկ երկրորդ,
որը ոչ պակաս կարևոր է, հիվանդանոց տե-
ղափոխված բժափոր տիֆով հիվանդն անվտանգ
է դառնում շրջապատողներին համար:

Մնալով տանը, մանավանդ չքափորներին մոտ,
որոնք ապրում են մի նեղվածք սենյակում, կա-
րողութ. տվյալները, որ նա կվարակի իր ընտա-
նիքի անդամներին, իսկ եթե նա միաժամանակ
և մոլեղնում է կամ կորցրել է գիտակցությու-
նը, այս դեպքում այդպիսի հիվանդին խնամքն
ավելի է դժվարանում և գրեթե անխմաստ է
տանը պահելը: Այդպիսի հիվանդին ոչ մի բո-
պե չի կարելի մենակ թողնել և հաճախ հարկ
է լինում, որ մոտիկ ազգականները թողնեն
իրենց աշխատանքը, ծառայության չզնան և
դիշեր-ցերեկ միայն հիվանդին խնամեն:

Ահա թե ինչու, կրկնում ենք, բժափոր տի-
ֆով հիվանդին անհրաժեշտ է անմիջապես հի-
վանդանոց տեղափոխել: Հիվանդանոցներում
հատուկ հարմարանքներ ու շինքեր պետք է լի-

նեն հիվանդներին մաքրելու, միջատները ոչըն-
չացնելու և բժշկական անձնակազմին վարակ-
վելու հնարավորութունից պաշտպանելու նպա-
տակով միջոցներ ձեռք առնելու համար: Հի-
վանդանոցում խնամող բժշկական աշխատողը,
սանիտարից սկսած մինչև բժիշկը, պետք է
նախապես լավ հրահանգված լինի բոլոր պար-
տադիր կանոնների մասին:

Հիմնական կանոնը հիվանդին պարազիտից
ապատելն է, եթե նա կա: Այս նպատակով յու-
րաքանչյուր ընդունվող հիվանդ պետք է հա-
մապատասխան կարգով սանիտարական մշակ-
ման ենթարկված լինի—մազերը կարճ խուլած,
սապոնով ու տաք ջրով լողացած, մաքուր սպի-
տակեղեն հագած և դրանից հետո միայն հի-
վանդասրահում տեղավորված: Հիվանդի ամ-
բողջ սպիտակեղենն ու հագուստն ուղարկվում
է դեզինսեկցիայի և դեզինֆեկցիայի: Բժշկա-
կան անձնակազմը պետք է ունենա հատուկ խա-
լաթներ, դլխաչորեր, կրկնակոշիկներ: Բժավոր
տիֆով հիվանդներին բոլոր խնամողներին հանձ-
նարարվում է հաճախ ընդունել վաննաներ սա-
պոնով, մանավանդ տուն գնալուց առաջ և ա-

վելի հաճախ փոխել սպիտակ դեմքը, հիշելով, որ մարմնի և հագուստի մաքրությունը լավագույն երաշխիքն է բժավոր տիֆով վարակվելու դեմ:

6. ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԲԺՇԿԵԼ ԲԾԱՎՈՐ ՏԻՖՈՎ ՀԻՎԱՆԴԻՆ

Առայժմ չկան այնպիսի դեղեր, որոնք միանգամից բուժեն բժավոր տիֆով հիվանդին, ուստի բժավոր տիֆով հիվանդի բուժումը կատարվում է այն միջոցների գործադրումով, որոնք թեթևացնում, բարելավում են հիվանդի ինքնազգացումը և պահպանում են նրա սրտի աշխատանքը: Բոլոր միջոցառումների մեջ ամենազլխավորն է՝ հիվանդի համար ստեղծել հիգիենիկ պայմաններ և համապատասխան խնամք: Հիվանդի սենյակը պետք է լինի մեծ, լավ օդավոխվող, սենյակում ավելորդ իրեր չպետք է լինեն: Հատուկ ուշադրություն պետք է հետևել հիվանդի բերնի խոռոչի մաքրությանը: Վատ խնամքի դեպքում այստեղ կարող են առաջանալ բարդություններ առաջանալ: Որ-

քան կարելի է շատ խմելիք տալ Հիվանդին (կարելի է օրական մինչև 10—12 բաժակ) :
Խմած հեղուկը՝ ջուրը, թեյը, կաթը, թթվաշ ջուրը և այլն նոսրացնում են օրգանիզմում եղած թուլյաները և այդ հանդամանքը հեշտացնում է նրանց արտադրությունը երիկամների միջոցով :

Հիվանդին պետք է լավ սնել : Ավելի լավ է փոքր բաժիններով, բայց հաճախակի, առավելապես հեղուկ և կիսահեղուկ սննդով : Լավագույն սնունդը հանդիսանում է կաթը զանազան ձևերով, հատկապես՝ կարելի է հանձնարարել մածուկ և թան : Սրանք, բացի սննդարար նշանակությունից, երբ սառը վիճակում են տրվում, հրաշալի համեղ և զովացուցիչ միջոց են տեղող Հիվանդի համար : Բուժական ուրիշ պրոցեդուրաների շարքում աչքի ընկնող տեղ է զբաղում ջրաբուժումը, որը շատ բարեբար ազդեցություն է ունենում Հիվանդի ընդհանուր ինքնազգացության վրա և հատկապես լավ ազդեցություն է ունենում ներվային ու սիրտ-անոթային սխտամի վրա : Ջուրը զործարկվում է շփելու, թաց սավանի մեջ փաթաթելու,

դլուխը կամ ամբողջ մարմինը ջրցանեւու և վերջնապես 35—36° C դուր վաննաներ տալու ձեռով: Այս բոլոր ջրային պրոցեդուրաները թուլացնում են զլխացավերը, պարզեցնում են զխտակցությունը, նվազեցնում զառանցանքն ու հուզմունքը և բարեւալում են շնչառությունն ու ընդհանուր ինքնազգացությունը: Բացի դրանից, հանձնարարվում է հիվանդի զլխին սառուց զնեւ հատուկ փուչիկով:

Սակայն բուժող բժշկի հատուկ ուշադրությունն են պահանջում հիվանդի սիրտն ու արյունատար անոթները, ինչպես նաև ներվային սխտեմը: Աստիճանաբար աճող թուլությունը բժավոր տիֆով շատ հիվանդների մոտ ամենից ավելի սպառնալից ու վտանգավոր երևույթ է համարվում:

Բժիշկը միշտ պետք է պատրաստ լինի, որ պետզի հարկավոր պահին օգնության հասնի հիվանդի հոգնած սրտին: Դրա համար մենք ունենք միջոցներ ընդհատ արսենալ, ինչպես՝ կամֆորա, կոֆեին, դիզիտալիս, ստրիխնին և այլն: Բժավոր տիֆի ընթացքում եղած բոլոր բարդությունները բուժվում են սիմպտո-

մատիկ կերպով ընդհանուր կանոնների համա-
ձայն :

7. ԻՆՁՊԵՍ ԱԶԱՏԿԵԼ ԲԾԱՎՈՐ ՏԻՖԻՑ

Կան հիվանդություններ, որոնցից աղատվելը
կախված է հենց իրենցից՝ բնակչությունից :
Այսպիսի հիվանդությունների թվին է պատկա-
նում նաև բժավոր տիֆը :

Ստալինյան հնգամյակների ընթացքում ար-
մատապես փոխվել է մեր ամբողջ երկրի՝ թե
քաղաքի և թե գյուղի դեմքը : Այժմ պայման-
ները բոլորովին այլ են. այժմ հերթի է դրված
բժավոր տիֆի նույնիսկ առանձին դեպքերի լիա-
կատար վերացումը : Սովետական բժշկականու-
թյունն այնպիսի բժշկականություն է, որը
ձդոռում է կանխել հիվանդությունները. այդ
պատճառով բժավոր տիֆի դեմ պայքարը միշտ
պետք է սկսել առանց սպասելու այդ անկոչ
հյուրի երևան դալուն :

Մի քանի եվրոպական երկրներ ահա արդեն

մի քանի տարի է, ինչ երկարատե ու սխառ-
մատիկ պայքարով ազատվել են բժավոր տի-
ֆից: Առայժմ մենք չենք կարող դրանով պար-
ծենալ. մեր պարտքն է ամենակարճ ժամանա-
կամիջոցում ՍՍՌՄ բնակչությանն իսպառ ազա-
տել ցարխիմի այդ ծանր ժառանգությունից:
Սովետական առողջապահության առաջ խնդիր
է դրված՝ մեր մեծ հայրենիքում արագ կեր-
պով ու լիովին ոչնչացնել բժավոր տիֆը:

Երբ գիտությունը հաստատեց, որ բժավոր
տիֆի միակ փոխանցողը ո՛վի՛ն է, դրանից հե-
տո նրա դեմ մղվող պայքարը հեշտացավ: Նշա-
նակում է, բժավոր տիֆը ոչնչացնելու համար
պետք է ոչնչացնել ո՛վի՛ները:

Թե ո՛վի՛լը և թե բժավոր տիֆը վախենում են
մաքրությունից, այստեղից եզրակացություն—
բժավոր տիֆի դեմ մղվող պայքարը նախ և
առաջ պայքար է հանուն կուլտուրայի, հանուն
բնակչության ամենօրինակ քարեկեցության:

Բժավոր տիֆի փոխանցման միջոցը դանդաղ,
մեղ արդեն ծանոթ գիտնական Նիկոլն ասում
էր— «Չկա բժավոր տիֆի դեմ պայքարի ավե-

լի պարզ միջոց, քան ջուրը, սապոնը և սպիտակեղենը»։ Մի ուրիշ գիտնական ավելացնում է «Մարդը և կեղտը երբեք չեն հաշտվում, կամ մարդն է նրան ոչնչացնում, կամ նա է մարդուն հաղթահարում»։

Եվ այսպես, առանց ոջիլի չկա բժավոր տիֆ։ Ոջիլը բուն է դնում այնտեղ, որտեղ կա կեղտ, անկուլտուրականութուն։ Ուզում ես ոչնչացնել բժավոր տիֆը, ոչնչացրու կեղտը, անկուլտուրականութունը և նրա հետ կապված ոջլութունը։

Մեր սովետական դյուղը դարձել է կոլեկտիվ, սոցիալիստական։ Կոլխոզային կարգն ապահովել է բազմամիլիոն բնակչության ունևոր կյանքը։ Ունևորության հետ աճում է նաև կուլտուրան, ուստի սովետական նոր դյուղի համար անհաղթահարելի չեն հին դյուղի թշնամիները—ոջիլն ու բժավոր տիֆը, եթե այդպիսիք լինեն։

Բոլոր կոլխոզները և սովխոզներն առաջին հերթին պետք է խրենց մոտ կազմակերպեն սանիտարական բժիշկների ցուցումներով կառուցված լավ բաղնիք ու լվացքատուն։ Հասարակա-

կան բաղնիքը դյուղում, կոլխոզում՝ սանիտա-
րական միջինում մի դլխավոր պահանջները մեկն
է: Սակայն բաղնիք կառուցելը բավական չէ,
հարկավոր է, որ բնակչութիւնը սիրի լողա-
նալ, որ բնակչութեան մեջ լինի մաքրասիրտ-
ութեան պահանջ ու սովորութիւն: Լողանալու,
անձնական հիգիենայի կանոնները պահպանելու
այդ սովորութիւնը, այդ սերն ամեն կերպ
պետք է դարձացնել ու արմատացնել մասա-
ների մեջ մշտական լաշ բացատրական աշխա-
տանքով— դասախոսութիւններով, զբոյցնե-
րով, կլինոցուցադրումներով, մամուլի միջոցով
և այլն:

Նոր բաղնիքների շինարարութիւնն այնպէս
պետք է ծավալել, որ յուրաքանչյուր կոլխոզ
ունենա իր բաղնիքը: Սակայն լավ է այնպէս
տեղի բաղնիք կառուցել, որտեղ միաժամանակ
լողանում են և իրերը դեղինակցիայի ենթա-
կում: Բաղնիքների անխափան աշխատանքի հա-
մար նրանց պետք է ապահովել վառելիքով
ու ջրով և նշանակել մի անձնավորութիւն, որը
պատասխանատու լինի բաղնիքի աշխատանքի և

նրան պատշաճ մաքրութեան մեջ պահելու համար:

Անհրաժեշտ է բավականաչափ սապոն մատակարարել բնակչութեանը, որովհետև կուլտուրականութեան բարձրացման հետ միասին մեր մասսաների մեջ բարձրացել է նաև սապոնի պահանջը: Անձնական հիգիենայի համար և որպես հիվանդութիւնը կանխելու միջոց, պակաս կարևոր չէ սպիտակեղենը հաճախ փոխելը: Սպիտակեղենն ուշ-ուշ փոխելը ոջլոտութեան պատճառներէից մեկն է:

Ինքնին հասկանալի է, որ կարևոր բժշկա-սանիտարական միջոցներից մեկն էլ հանդիսանում է բժշկական օգնութիւնը բնակչութեանը մուսկուլները և մշտական հսկողութիւնը մանաւանդ աշտեղ, որտեղ մարդիկ են կուտակվում—նորակառույցներ, հանրակացարաններ, բարաքներ, քարվանսարայրներ, արգելարաններ, մանկական հիմնարկներ, դպրոցներ և այլն:

Ամենուրեք, որպես հիմնական պահանջ, պետք է առաջ քաշվի բաղնիքների, լվացքատների, դեզինֆեկցիոն կամերաների, վարսափերանոցների ցանցի պարտադիր կազմակեր-

պուժը և ամեն մի նոր եկածի սանխտարական
մշակումը: Նույն չափով հաճախակի դեղին-
սեկցիաներ պետք է կատարվեն երկաթուղու
կայարաններում, վազոններում, տրամվայնե-
րում, դպրոցներում, զորանոցներում և այլն:

Մյուս կարևոր միջոցառումը հանդիսանում է
դեպքի արագ հայտարերումը և հիվանդի արագ
հոսպիտալացումը: Հիվանդը՝ որքան շուտ մե-
կուսացվի շրջապատողներից, այնքան ավելի քիչ
կլինի վարակի տարածման վտանգը: Կանոնա-
վոր կերպով և բոլոր կանոնների համաձայն
սանխտարական մշակման ենթարկված, այսինքն
ոջիններից ազատված հիվանդը ոչ ոքի համար
այլևս ոչ մի վտանգ չի ներկայացնում: Հի-
վանդին հիվանդանոց տեղափոխելուց հետո այն
բնակարանը, որտեղ պառկած է եղել նա, պետք
է ուշադիր կերպով դեղինսեկցիայի ենթարկել,
իսկ բնակարանում մնացողների վրա սանխտա-
րական հսկողութունն սահմանել՝ հիվանդու-
թյան հնարավոր նոր դեպքերը ժամանակին
հայտարերելու համար:

Բժավոր տիֆը կանխելու և սանխտարական
միջոցումը պահպանելու աշխատանքին պետք է

մասնակից դարձնել նաև կազմակերպված հասարակայնությանը— հասարակական սանիտարական լիազորներին, կոլխոզային քույրերին, սանիտարական բրիգադաներին, դպրոցական ակտիվին, սանիտարական պոստերին և կարմիր խաչի ակտիվին :

Ոջիւններին ոչնչացնելու համար դոյություն ունեն բազմաթիվ միջոցներ ու եղանակներ : Սակայն այդ միջոցներից ու եղանակներից որն էլ որ դործադրվի, հարկավոր է լավ հիշել, որ ոջիւնների դեմ մղվող պայքարը պետք է տարվի սխտեմատիկորեն ու պլանաչափորեն : Ոջիւններին սպանող մի քանի միջոցներ միշտ էլ անիծաներին չեն սպանում և եթե վերջիններս մնում են, 4—6 օրվա ընթացքում նրանցից թրթուրներ են դուրս գալիս : Թրթուրը երեք անգամ մաշկափոխվում է, այսինքն փոխում է մաշկը, որից հետո վեր է ածվում հասուն ձևի : Նպաստավոր պայմաններում ոջլի զարգացման ցիկլը տևում է միջին հաշվով 14-ից մինչև 20 օր : Շորի ոջլի սեռահասուն կյանքի առավելագույն տևողությունն է 46 օր, իսկ գլխի ոջլինը՝ 88 օր :

Շորի էգ ոջիլը դնում է օրական 6—14 անիծ, իսկ իր ամբողջ կյանքի ընթացքում նա կարող է դնել 200—ից մինչև 300 անիծ: Գլխի էգ ոջիլը դնում է օրական ոչ ավելի, քան 4 անիծ, իսկ ամբողջ կյանքի ընթացքում մինչև 140 անիծ: Անիծ դնելու համար լավագույն ջերմաստիճանն է +32:

Այդ պատճառով ոջիլներին ոչնչացնելու համար դործադրվող միջոցները պետք է կրկնել որոշ կարճ ժամանակամիջոց անցնելուց հետո և այդ դեպքում միայն կարելի է վստահել հաջողությանը:

Ամեն մի տեսակ պարազիտի, այդ թվում նաև ոջիլների ոչնչացման լավագույն միջոցը Ֆիզիկականն է—բարձր ջերմությունը: 100—110° C հոսող գոլորշին 10—15 րոպեի ընթացքում և 90—110° C սաք օդը 20—30 րոպեի ընթացքում սպանում է ոջիլներին: Ֆիզիկական միջոցներով ոջիլներին և անիծներին ոչնչացնում են հատուկ կամերաներում (ոջլասսպան-вошебойка) կամ տնային միջոցներով: Լավ ոջլասպան-կամերա էժան ու հասարակ ձևով կարելի է պատրաստել կոլիտողում: Կան և ա-

վելի բարդ ու ավելի էֆեկտիվող կամերաներ—
դեզինսեկցիոն կամերաներ, որոնք աշխատում
են հոսուն տաք օդով կամ դուրըչիով: Դեզին-
սեկտորները և կամերաները սլախատուխյան
դեպքում, մանավանդ դյուղական վայրերում,
չպետք է խուսափել դեզինսեկցիայի ավելի
պարզ ու հասարակ միջոցներից:

Այս նպատակով, մեզ թվում է, կարելի կլինի
օգտագործել մեր թոնիրը. դյուղական պայման-
ներում նրանք, որպես տՂասպան, արդեն օգ-
տագործվում են մանավանդ ձմռանը: Անհրա-
ժեշտ է միայն սովորեցնել ավելի ճիշտ օգտվել
նրանցից և դրա համար հատուկ մշակված
ցուցումներ ու հրահանգներ տալ:

Ֆիզիկական միջոցներին են պատկանում նաև
սպիտակեղենը կես ժամի չափ եռացնելը (ավելի
լավ է մոխրաջրով), մի քիչ խոնավացրած սպի-
տակեղենի ծալքերն ու հազուստի կարերը տաք
հարթուկով հարթուկելը:

Դեզինսեկցիայի մի ուրիշ ձևը քիմիականն է:
Իրերը քիմիական միջոցով կարելի է մշակել
նաև տնային պայմաններում: Այսպես, օրինակ,
լավ արդյունքներ է տալիս Սուլֆենտի լուծույթ-

թի (սապնա-սոյլփենուային քառակի 10% ջրային լուծույթ), լիզոլի տաք լուծույթի և այլնի դործադրումը: Դեզինսեկցիայի ենթակա իրերը դարձադրում են տաշտի կամ մի ուրիշ ամանի մեջ ու վրան լցնում պատրաստի տաք լուծույթ և թողնում 20—30 րոպե: Դեզինսեկցիայից հետո սպիտակեղենը լվացվում է սովորական ձևով, ընդ որում, միջատների ոչնչացման համար հետագա եռացում այլևս չի պահանջվում:

Դլխի ոջիլներին ոչնչացնելու համար ավելի լավ է օգտվել նավթից: Մազերը թրջում են նավթով և հետո 15 րոպեով պլինդ կապում թաշկինակով: Դրանից հետո դլուխը լվանում են տաք ջրով և մազերը սանրում խիտ սանրով:

Իրերի, սպիտակեղենի և դլխի դեզինսեկցիայի համար առաջարկված են նաև ուրիշ միջոցներ, բայց մենք բերինք միայն ամենից ավելի մատչելիները և լավադույն արդյունք սովողները: Սակայն ինչ միջոց էլ որ դործադրվի, այնուամենայնիվ չպետք է մոռանալ, որ ավելի հեշտ և ավելի դյուրին է ոջիլների երևան դարը կանխելը, քան նրանց ոչնչացնող միջոցները կի-

րատելը, այսինքն, կենցաղային ոջլոտության
դեմ մղվող պայքարում վճռական դերը խաղում
է անձնական հիգիենան—հոգատարությունը
մարմնի, սպիտակեղենի և հազուատի մաքրու-
թյան մասին:

Եվ եթե ամբողջ բնակչությունը—յուրաքան-
չյունն առանձին և ըստը միասին համառորեն
ու եռանդով կատարեն սանիտարական միջնորդ-
մը, պայքարեն հանուն մաքրության, հանուն
նոր կյանքի կուլտուրական կառուցվածքի, ա-
պա կարելի է երաշխավորել, որ մենք միան-
գամ ընդմիջտ և անվերադարձ կազատվենք ոջ-
լից, հեռեապես և բժավոր տիֆից:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է բժավոր տիֆը 4
2. Բժավոր տիֆի պատմութիւնը 6
3. Ինչպէս է առաւելում բժավոր տիֆը 16
4. Ինչպէս է ընթանում բժավոր տիֆը * 32
5. Ի՞նչ պետք է անել բժավոր տիֆով հիվանդացածի հետ * 40
6. Ինչպէս պետք է բժշկել բժավոր տիֆով հիվանդին 43
7. Ինչպէս ազատվել բժավոր տիֆից 46

Պատ. խմբագիր՝
Գ. Ս. Պ ա պ ո վ յ ա ն

ՎՅ 1026. Պատվեր 74. Տիրաժ 2000՝
Տպագրական 3½ մամ. Հեղին. 1,40 մամ. Մեկ
մամուլում 16560 նշան, Ստորագրված է
տպագրության 16/II 1942

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037247

89

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

A $\frac{1}{2491}$

Գիտությունների վաստ. գործիչ
ՊՐՈՖ. Ա. Ա. ՄԵԼԻՔ-ԱԳԱՄԵԱՆ

ԲԾԱՎՈՐ ՏԻՖ

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

616.9

1456

V-45

U.S. Dept. of Agriculture

F. S. S. S. S. S.

504.



Պիտոյութանների վաս. գործիչ
ՊՐՈՖ. Ա. Ա. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄՅԱՆ

616.922
Մ-45

ՄԱՌԻՊՎԱԾ Է 1967 թ.

ԲԾԱՎՈՐ ՏԻՖ

1456

A $\frac{1}{2491}$



ՀԱՅՄԵՏՐԱՍ
ԵՐԵՎԱՆ
1942

Проф. А. А. Мелик-Адамян

СЫПНОЙ ТИФ

(На армянском языке)

Аргиз, Ереван, 1942 г

Գիտութեան վաստակավոր գործիչ պրոֆ. Ա. Ա. ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆԻ «ԲԾԱՎՈՐ ՏԻՖ» զբերուելը ներկա հայրենական սրբազան պատերազմի օրերին ակտուալ նշանակութիւն է ստանում հերոսական կարմիր Բանակի թիկունքը սակիտարական տեսակետից ամբապնդելու գործում:

Մեր ռեսպուբլիկայի բժշկական աշխատողները, ողջ Սովետական Միութեան առողջապահական ֆրոնտի բազմահազար աշխատավորների հետ միասին, հենվելով մեր հայրենիքի հայրենասերների ակտիվութեան վրա, թույլ չեն տա վարակիչ հիվանդութիւնների առաջացումը, հիվանդութիւններ, որոնք հատուկ էին անցյալ պատերազմներին և որոնք հսկայական վնաս էին հասցնում թիկունքին ու ռազմականատին: Սա առանձնապէս վերաբերում է բժավոր տիֆին:

Ռեսպուբլիկայի բժշկա-սանիտարական ցանցի բոլոր աշխատողները մեծից մինչև փոքրը, սանիտարական և հակահամաճարակային ֆրոնտի, ինստիտուտների ու կլինիկաների, հիվանդանոցների ու պոլիկլինիկաների, կոնսուլտացիաների ու դպրոցների, գյուղական բժշկական տեղամասերի, ձեռնարկութիւնների արկայան-

ների, կոլյոնգային բուժակային և մանկաբար-
ձական կայանների աշխատողները պետք է գըլ-
խավորեն մասսաների ակտիվութունը, գործի
կոչեն մեր սանիտարական ակտիվին (հասարա-
կական սանիտարական լիագործներին քաղաքում
և գյուղում, կոլյոնգային բրիգադիներին, տը-
ներին, ձեռնարկութուններին, հիմնարկներին, կոլ-
խոզներին ու սովխոզներին սանիտարական պոս-
տերին, Կարմիր խաչի դրուժինիկուհիներին ու
ողջ ակտիվին, դպրոցներին, հանրակացարաննե-
րի սանիտարական կազմակերպութուններին և
այլն), ամենօրյա պայքար մղելու բժավոր տի-
ֆը կանխելու համար, բաղնիքների, լվացա-
տների, վարսավիթանոցների և այլնի նորմալ
աշխատանքի համար:

Անյորտակելի առողջ քիկունք ստեղծելով՝
մենք մոտեցնում ենք գերմանա-ֆաշիստական
գիշատիչների վերջնական ջախջախումը:

Հայկական ՍՍՌ վաստակավոր բժիշկ Գ. Ս. ՊԱՊՈՎՅԱՆ

1. Ի՞նչ է ԲՄԱՎՈՐ ՏԻՖԸ

Բժաշկոր տիֆը սուր-վարակիչ և համաճարակային հիվանդութունն է:

Վարակիչ է կոչվում, որովհետև բժաշկոր տիֆով մարդ վարակվում է բժաշկոր տիֆով հիվանդ մարդուց, ուրիշ խոսքով, սա նշանակում է, որ այն վայրում և մարդկանց միջավայրում, որոնց հետ շփում է ունեցել հիվանդը, բժաշկոր տիֆի վարակ է եղել: Բժաշկոր տիֆը մենք անվանում ենք նաև սուր-վարակիչ հիվանդութուն, որովհետև նա սկսվում է սուր կերպով, միանգամից, տևում է մոտ 2—3 շաբաթ, ուղեկցվելով շատ բարձր ջերմությամբ, ինչպես նաև միանգամից վերջանում է, այլևս չկրկնվելով նույն մարդու մոտ:

Տիֆ բառը ծագում է հունարեն «տիֆոս»

բառից, որ նշանակում է ծուխ, մշուշ, շմե-
ղում: Այս նշանակում է, որ բծավոր տիֆի
դեպքում հիվանդը, որպես կանոն, դռնվում է
չջած, ուշաթափ վիճակում, այսինքն՝ կորց-
նում է դիտակցութունը և դառանցում: Իսկ
բծավոր է կոչվում նրա համար, որ այդ հի-
վանդության դեպքում, նրա սկսելուց մի քանի
օր անց, հիվանդի մարմնի վրա ցան (բծեր) է
դուրս տալիս: Այս ցանը շատ բնորոշ է, առատ
և հեշտ նկատելի:

Բծավոր տիֆը վաղուց է վեր հայտնի էր
զանազան անուններով, ինչպես «սովի տիֆ»,
«սլատերազմի տիֆ», «բանտային տիֆ», «նամ-
բարային տիֆ», «նավային տիֆ», «ոջիլային
տիֆ» և այլն:

Այս բոլոր անունները ցայտուն կերպով ցույց
են տալիս, թե ինչպիսի պայմաններում, որ-
տեղ և ինչ պատճառներ են ազդում բծավոր
տիֆի զարգացման ու տարածման վրա: Երբեմն
բծավոր տիֆը որևէ տեղ ախտահարում է զբե-
թե բոլորին, այնուհետև մի վայրից անցնում է
մի ուրիշ վայր, ընդդրկելով մարդկային նորա-
նոր խմբեր: Այս դեպքում մենք ասում ենք, որ

սկսվել է բժաշկոր տիֆի համաճարակը: Եվ
այսպես, բժաշկոր տիֆը տարածվում է համա-
ճարակորեն, բռնելով ամբողջ մարզեր, պետու-
թյուններ, երկրներ. ահա թե ինչու բժաշկոր
տիֆը, բացի սուր-վարակիչ՝ Հիվանդություն
լինելուց, նաև համաճարակային Հիվանդություն
է համարվում:

2. ԲՄԱՎՈՐ ՏԻՖԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պատմության մեջ բժաշկոր տիֆի համաճարակին վերաբերող առաջին տեղեկությունները կապված են պատերազմների հետ: Բժաշկոր տիֆի առաջին նկարագրությունը պատկանում է իտալական գիտնական, պոետ և բժիշկ Ֆրակաստորին, որն ապրելով 16-րդ դարում, տվել է բժաշկոր տիֆի համաճարակի մանրամասն նրկարագրությունը Ֆրանսիական բանակի մեջ, որը 1527 թվականին Լոտրեկի հրամանատարությամբ ուղարկված էր Նեապոլիտանական թագավորությունը գրավելու:

Կարելի է առանց սխալվելու ասել, որ այն

Ժամանակվանից դրեթե բոլոր պատերազմներին
զուգորդում էր այդ դաժան հիվանդության
համաճարակը, և պատերազմներում եղած դո-
հերի մեծ մասը կազմում էին ոչ թե նրանք,
ովքեր մահացել էին զենքից, սպանվել էին ճա-
կատամարտերում, կամ մեռել վիրավորվելուց,
այլ նրանք, ովքեր զոհ էին զնում բժավոր տի-
ֆի համաճարակների դաժան բռնկումներին, ո-
րոնք ծագում էին զորքերի մեջ: Ըստ վիճակա-
դրական տվյալների՝ 1733 թվականից սկսած
մինչև 1865 թվականը Եվրոպայում եղած պա-
տերազմներում մահացել է մոտ 8 միլիոն զին-
վոր, որոնցից միայն 11/2 միլիոնը սպանվել է
մարտերում ու մեռել վերքերից, իսկ մնացած
6 1/2 միլիոնը մեռել է զանազան հիվանդու-
թյուններից և դվիավորապես բժավոր տիֆից:

Պատերազմներով սուսանձապես հարուստ
19-րդ դարը նպաստեց բժավոր տիֆի տարած-
մանը սմբողջ Եվրոպայում, այդ թվում նաև
Ռուսաստանում: Զինվորական մասերի անվերջ
տեղաշարժումները, բերդերի ու քաղաքների
երկարատև պաշարումները, բնակչության հրո-
կայական մասսաների քայքայումն ու աղքատա-

ցումը պատճառ հանդիտացան զանազան վարակիչ հիվանդությունները և առավելապես բժավոր տիֆի տարածման, և այն երկիրը, որն ավելի աղքատ էր, ավելի անկուրաբարական, կամ մոտաված բերքի պահասությունից, այնտեղ բնակչությունն արդեն թուլացած էր, հյուծված, սանիտարական տեսակետից ապրում էր վատագույն պայմաններում, ուստի այնտեղ համաճարակն ավելի ուժեղ էր, ավելի երկարատև ու ավելի ավերիչ:

Հաղթական Փրանսիական բանակը 1812 թվականին Ռուսաստանի դեմ մղած պատերազմում բժավոր տիֆից կորցրեց իր անձնակազմի դրեթե կես մասը, առանձնապես շատ Փրանսիացի ոչնչացավ նահանջի ժամանակ:

Հասկանալի է, որ բժավոր տիֆը չինայեց նաև ռուսական բանակին: Համաճարակը շատ մանտրակվեց միայն բանակով, նա տարածվեց նաև քաղաքացիական բնակչության մեջ և ընդգրկեց հսկայական տարածություններ:

Բժավոր տիֆի մեծ համաճարակ է նկատվել նաև Ղրիմի պատերազմի ժամանակ (1854—1856): Ղրիմից բժավոր տիֆն անցել է Օդեսսա,

Չերնիգովի դավառը, իսկ այնուհետև տարած-
վել է ամբողջ Ռուսաստանում :

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ
(1877—1878) ըստ վիճակագրության տվյալնե-
րի՝ ռուսական զորքերի մեջ զանազան տիֆերով
հիվանդացել է 199·538 մարդ, որոնցից մեռել է
43·985, այնինչ զենքից մեռել է ընդամենը
34·742 մարդ : Բոլոր տիֆերի մեջ առաջին
տեղն, անշուշտ, պատկանել է բծավոր տիֆին :
Թուրքական բանակում բծավոր տիֆն ավելի
մեծ ավերածություններ է դարձել :

Պատերազմներից բացի, բծավոր տիֆի հա-
մաճարակի զարգացման պատճառը, ինչպես ար-
դեն նշեցինք, եղել են նաև բերքի պահասն ու
սովը, որ բացատրվում է մի կողմից սովյալ-
ների օրդանիզմի դիմադրողականության թու-
լությամբ, իսկ մյուս կողմից՝ մի կտոր հաց
դանելու համար բնակչության մասսայական
տեղաշարժումներով և՛ կյանքի սանիտարական
պայմանների վատթարացումով ու այդ հողի
վրա մասսայական ոջլոտության զարգացումով :
«Սովի տիֆի» համաճարակներ են նկատվել սո-
վի կողմից ընդգրկված բոլոր վայրերում :

1846—1849 թվականները սույլի տարիներին միայն Իսլանդիայում, այդ ամենից ավելի աղքատ հողագործական երկրում, բծավոր տիֆոյ չիվանդացել է մինչև $1\frac{1}{2}$ միլիոն մարդ:

«Սույլի տիֆի» համաճարակն իր բուն առանձնապես հաստատեց ցարական Ռուսաստանում, որտեղ միապետական-կալվածատիրական սեփական աղատորեն դարդանալու հնարավորութիւնն չէր տալիս մտղովբղին, ստեղծում էր ծանր անտեսական պայմաններ, աղքատութիւն, անկուշտութեանութիւն և դոյութիւն ստեղծելու հակասողջապահական միջոց:

Մինչև առաջին իմպերիալիստական պատերազմը, վերջին 25 տարվա ընթացքում ցարական Ռուսաստանում ամեն տարի բծավոր տիֆոյ չիվանդանում էր միջին հաշվով մինչև 100 հազար մարդ, իսկ որոշ տարիներ՝ էլ ավելի: Ռուսաստանում բծավոր տիֆի դարդացման ու տարածման դրժում մտքը դէր չէին խաղում բանտերում կալանավորների մեջ չհաղարող բծավոր տիֆի դեպքերը: Կուսակալածութիւնը, հակասանխտարական պայմանները, որոնց մեջ պահվում էին բանտարկյալները, համա-

տարած ոչլուտությունը նպաստավոր պայմաններ էին ստեղծում ոչ միայն չղաղարող դեպքերի, այլև խոչոր բռնկումների համար: Բժավոր տիֆը բանտերում հաղարավոր զոհեր էր տանում: Այստեղից էլ այդ հիվանդությունն ստացել է «բանտային տիֆ» անունը: Իսկ բանտերից այդ հիվանդությունն անցնում էր տեղական բնակչությանը՝ հաճախ ստեղծելով իսկական համաճարակի սպառնալիք: Այսպես, 1908 թ. դարնանը, «բանտային տիֆն» ընդգրկեց Ռուսաստանի 36 նահանգ:

Մինչև ռևոլյուցիոն Ռուսաստանում բժավոր տիֆը չէր վերանում ոչ միայն պատերազմների, սովի և բերնե-բերան լցված բանտերի պատճառով, այլև այն պատճառով, որ ամբողջ երկիրը համարյա նույնպես բանտ էր հիշեցնում: Հատասանիատարիան, կեղտը, անկուլտուրականությունն ու կուտակվածությունը տիրում էին ամենուրեք՝ քաղաքներում ու դյուղերում: Բազմաթիվ մարդիկ ապրում էին անտանելի բնակարանային պայմաններում—կուտակված, նեղ, կեղտոտ: Հատկապես վատ էին ապրում դյուղերից եկած սևագործ ու սեզոնային բան-

վորները և մեծ քաղաքների բանվորութեան ամենաաղքատ խավերը: Սովորաբար նրանց համար բնակարան էին ծառայում ծայրամասերի նեղ ու կեղտոտ փողոցներում եղած նկուղային հարկերը, գիշերվա ապաստարանները (НОЧЛЕЖКВ): Այստեղ բժափոր տիֆը լայ հոդ և հարուստ հունձ էր գտնում: Մանավանդ գիշերվա ապաստարանները, որոնք լցված էին անտուն, քաղցած, ոջիլներով ծածկված բնակիչներով, հանդիսանում էին բժափոր տիֆի օջախներ, որտեղից և տարածվում էր այդ հիվանդութեան համաճարակը:

Երբեմն բժափոր տիֆի համաճարակի բռնկման տեղեր էին հանդիսանում նաև զորանոցները, փակ ուսումնական հաստատութեանները, քարվանսարայները, բանվորների կուտակման տեղերը— նորակառույցները, նավերը և մանավանդ ուխտավորները, որոնք հակայական մասսաներով գնում էին երկրպագելու «սուրբ վայրերը»: Այս բոլորը մի շղթայի օղակներ էին, որոնց միջոցով բժափոր տիֆը Ռուսաստանի մի ծայրից մյուս ծայրն էր անցնում, ամեն տեղ գտնելով իր համար բավականաչափ կենսանյութ

և արտահանելով հիմնականում ինչպես քաղաքի, այնպես էլ դյուղի չքավորությանը:

Որ բծավոր տիֆն արտահանում է առավելապես չքավորներին, սրբող կերպով ասում է վիճակագրությունը: Այսպես, ըստ վիճակագրության, Լոնդոն քաղաքում, բծավոր տիֆի բոլոր դեպքերից չքավորներին ընկնում է 96,76%, իսկ մեր վիճակագրության համաձայն մինչև սևոլուցիտն Լենինգրադում 9 տարվա ընթացքում չքավոր դասակարգերին ընկնում էր բծավոր տիֆով հիվանդացումների 96%, ունևորներին՝ 3,2%, իսկ հարուստներին 0,8%-ից պակաս:

Այլևի՛ հաճախ, քան քաղաքներում, բծավոր տիֆը բռնկվում էր դյուղերում, դյուղացիներին մեջ, որոնց կալվածատերերը հասցրել էին կատարյալ աղքատության, նրանք ասլրում էին սոսկալի հակաառողջապահական պայմաններում, միանդամայն անդրադեա էին սանիտարական տեսակետից: Այստեղ բծավոր տիֆը դյուղի համար դարձել էր կենցաղային երկվույթ: Այս դրությունը ցարական Ռուսաստանում տեկց ավելի քան 100 տարի: Բծավոր

տիֆլի դեմ պայքարը տարվում էր միայն խոչոր
կենտրոններում — քաղաքներում, իսկ գյուղե-
րում՝ միայն մեծ համաճարակների ժամանակ.
Բժավոր տիֆլը՝ պետական մասշտաբով լիովին
ունչացնելու մասին խոսք անդամ չկար: Միայն
սովետական իշխանության օրով դրվեց բժավոր
տիֆլի լիակատար վերացման հարցը, երբ նա ա-
ռանձնապես բռնկվեց 1918—1921 թվականների
քաղաքացիական պատերազմի ժամանակ:

Ինչպես և պետք էր սպասել, երկարատև դա-
ժան առաջին իմպերիալիստական պատերազմի
և հետագա տնտեսական քայքայումը, ցածր
կուլտուրայի, գյուղացիական բնակչության,
դրեթե համատարած անդրադիտության և երկ-
րի սանիտարական հետամնացության պայման-
ներում, պետք է տային իրենց կործանիչ պը-
տուղները:

Աղքատության, խավարի ու կեղտի մեջ դա-
րերով ապրող ժողովուրդը հազարներով պետք
է կոտորվել բժավոր տիֆլից և ուրիշ վարակի:
հիվանդություններից:

Եվ իրոք, իմպերիալիստական պատերազմի
ու մանավանդ՝ քաղաքացիական պատերազմի

վերջին տարիների ընթացքում բծավոր տիֆը Ռուսաստանում հսկայական բռնկում ավելց, չտեսնված չափերի հասավ:

Ըստ վիճակագրական տվյալների՝ այդ տարիների ընթացքում Ռուսաստանում Հիվանդացավ ամբողջ բնակչության մոտ $\frac{1}{5}$ -ը, իսկ Հիվանդացածներին (մոտ 25 միլիոն) մեռավ մոտ 2 միլիոն մարդ:

Սովետական իշխանությունն այն ժամանակ չատ ջանքեր գործադրեց բծավոր տիֆի համաճարակը հաղթահարելու համար: Վիթխարի լարումով և սպաքարի գործի մեջ ներդրաված լայն աշխատավորական մասսաների օդնությամբ հաջողվեց ճնշել այդ դաժան համաճարակը՝ ցարական իշխանության, իմպերիալիստական սպաերազմի և ինտերվենցիայի այդ տխուր ժառանգությունը:

Վ. Ի. Լենինը համաճարակի ամենակատաղի շրջանում, 1919 թվականին ասում էր, որ անհրաժեշտ է «Ռուսական երկրի երեսինջ ջնջել բծավոր տիֆը—անկուլտուրականության, աղքատության, խավարի և տղիտության ար-


դյունքը» : Եվ համաճարակը լիկվելուց տայի են-
թարկվեց :

Սակայն բժաշկուր տիֆը մեզ մոտ վերջնակա-
նապես չվերացավ : ՍՍՌՍ տերիտորիայի վրա
դեռ մինչև այժմ էլ նկատվում են բժաշկուր տի-
ֆի առանձին դեպքեր : Ճիշտ է, հիմա հիվան-
դանում են ոչ թե հարյուրներ, հազարներ, այլ
առանձին քաղաքացիներ, բայց անցյալի փոր-
ձից մենք դիտենք, որ, եթե ձեռք չառնվեն
ամենակարուկ միջոցներ, այդ առանձին դեպ-
քերը կարող են համաճարակ տալ : Վ. Ի. Լե-
նինի ավանդը պետք է կատարել :

Մեր երկիրը, որն արդեն վերացրել է ան-
դրադիտուլթյունը և արդեն վերացնում է առան-
ձին տեղերում դեռ ևս մնացած սանիտարական
հետամնացուլթյունը, կարող ենք վստահ լինել,
որ կկարողանա վերացնել նաև բժաշկուր տիֆի
ամեն մի հնարավորուլթյուն :

3. ԻՆՉՊԵՕՍ Է ՏԱՐԱԾՎՈՒՄ ԲԾԱՎՈՐ ՏԻՖԸ

Որ բժաշկուր տիֆը վարակիչ հիվանդուլթյուն
է, այդ վաղուց դիտեն, իսկ թե ինչպես է վա-



խանցվում և որակը է դանդում նրա վարակը, վերջերս խմացան: Այժմ դեխուլթյան կողմից հաստատված է, որ բծավոր տիֆի վարակիչ սկզբնավորութունը դանդում է բծավոր տիֆով հիվանդի արյան մեջ և որ բծավոր տիֆով կարելի է վարակվել միայն այն դեպքում, երբ վարակը բծավոր տիֆով հիվանդի արյունից բնկնում է առողջ մարդու արյան մեջ:

Դեռևս նախկին համաճարակները ժամանակ շատ հետադուտոզներ մասնանշել էին այն վատաբ, որ բծավոր տիֆի վարակը փոխանցվում է հիվանդի զանազան առարկաների, մանավանդ սպիտակեղենի, հաղուստի միջոցով, և որքան հաղուստը շատ էր կեղտոտված լինում միջատներով, այնքան ավելի արագ էր տեղի ունենում վարակի փոխանցումը:

Լավերանը դեռ 1813 թվականին հետաքրքրական տեղեկութուններ էր հաղորդում, թե բծավոր տիֆը ինչպես էր տարածվում Վրլին քաղաքի հրեաների մեջ, որոնք դնել էին բծավոր տիֆից մեռած ֆրանսիացիների հաղուստ: Որ այս հիվանդութունը կեղտոտ հաղուստի միջոցով մարդուց մարդուն է անցնում, այդ հե-

տաղտոված էր շատ հեղինակներէ կողմից, բայց ոչ ոք չէր վստահում այդ փոխանցումը կատարել ոջիւններէ հետ և նրանց համարել վարակի փոխանցման միակ սկզբնապատճառը:

Բժավոր Թիֆլի վարակի փոխանցման դորժումն ոջիւնների ունեցած դերի վերաբերյալ արտահայտված երկչոտ կասկածներն ու հիպոթեզները սակավ համոզեցուցիչ էին ժամանակակիցների համար, իրենց վրա չէին դրավում բժիշկների ուշադրութեանը և շատ շուտով մոռացվում էին: Հետաքրքրական է, որ սրանից դեռ 85 տարի առաջ այս միտքն արտահայտողներինց առաջիններից մեկն էր ուսուցիչներին վերաբերող Պրիբրիլը, որն այն ժամանակ աշխատում էր Կովկասում: Նա նկատել էր, որ ինչքան շատ ոջիւններ էին լինում զինվորների վրա, այնքան շատ էին լինում բժավոր Թիֆլի դեպքերը: Նրա խորհրդով սկսեցին ավելի հաճախ բաղնիք ուղարկել ուսուցիչներին ու դերի թուրքերին, և այդ բովանդակները, որպեսզի զգալիորեն սպակասի բժավոր Թիֆլի: Նրա այս փորձը, զետեղութեանները դժբախտաբար մոռացվեցին և համարյա ոչ ոք ուշադրութեան չէր դարձնում

նրանց վրա: Նույն միաքն արտահայտեց 1870 թվականին Օդեսսայի Հիվանդանոցում աշխատող սուս բժիշկ Մինխը: Եվ միայն 1909 թվականին Փրահայի դիտնական Նիկոլը, որ իր աշակերտներով աշխատում էր Թունիսում, վերջնականապես հաստատեց, որ տիֆը Հիվանդ մարդուց առողջին փոխանցելու միակ պատճառը հանգիստնում է շորի ոջիլը: Նա հաստատեց նաև, որ բժավոր տիֆի վարակը գանձում է Հիվանդի միայն արյան մեջ, իսկ նրա մյուս բոլոր արտաթորությունները, այսինքն թուզը, փսխածքը, մեղր, կղանքը, եթե նրանց հետ արյուն չի խառնված, վարակ չեն պարունակում: Այս բանը նրանք տպացուցեցին բազմաթիվ փորձերով, արհեստական կերպով ոջիլների մեջնոցով կապիկներին վարակելով բժավոր տիֆով: Այս հարցում մենք այժմ այլևս չենք տարակուսում և չկա մեկը, որ ժխտի այդ միաքը:

Նիկոլի դյուռայի հետո մեզ համար պարզ ու հասկանալի դարձավ, թե ինչու համաճարակը բանկվում էր դիտավորապես պատերազմների ու սովի ժամանակ, բանտերում, զորանոցներում

և այլն: Հասկանալի դարձավ նաև այն, թե ինչու տեսեսապես, սանիտարա-կուլտուրական տեսակետից հետամնաց երկիրն առաջին հերթին էր դո՛հ դառնում բծավոր տիֆի համաճարակին: Վերջապես, գիտենալով վարակի փոխանցման դորժում ոջիլները ունեցած դերը՝ դժվար չի լուծել, թե ինչ միջոցներով պետք է պայքարել համաճարակի դեմ և ինչպես ոչընչացնել համաճարակի առաջացման ամեն մի հնարավորություն:

Գիտնական Նիկոլին հաջողվեց բծավոր տիֆով վարակել առողջ կապիկներին, նրանց վրա փոխանցելով բծավոր տիֆով հիվանդ կապիկները ոջիլները: Իսկ մյուս պարազիտները—վայրատոջիլները, լվերը, մսծակները նրա փորձերում բծավոր տիֆ չէին փոխանցում և միայն ոջիլն էր անփոփոխ կերպով փոխանցողը: Այսպիսով Նիկոլի համար պարզվեց, որ առանց ոջիլի չկա բծավոր տիֆ, իսկ ոջիլն առաջանում է այնտեղ, որտեղ կա կեղտ, անկուլտուրականություն, չքավորություն: Այստեղից եզրակացություն. ուղում ևս ոչնչացնել բծավոր տիֆը,

ոչնչացրու կեղտը, անկուտուրահանությունը և
դրանց հետ կապված ոջլոտությունը:

Առաջին խմբերիալիստական պատերազմի ժա-
մանակ բոլոր պատերազմող կողմերն ստիպված
էին հանդիպել բժաշկոց տիֆլին: Հարկավոր էր
արագ կերպով ուսումնասիրել այս օտարախ
թշնամուն և ոչնչացնել նրան: Նիկոլի աշխա-
տանքները բոլորին հայտնի էին, կամ կարող է
պատահել, Նիկոլի փորձերը բոլորի համար հա-
մողեցուցիչ էին, անհրաժեշտ էր կուտակել
փորձ, սեփական դիտողություններ, և ահա
դերմանական ղինվորական բժիշկ Յուրգենսը
մարդակեր ֆաշիստին հատուկ անդթությամբ
փորձեր է անում ուսւ ուղղմադերիների վրա,
որոնք մեծ թվով դերի լինելով դերմանացիների
մոտ, հիվանդանում էին սովից, ցրտից, կեղ-
տից ու ոջլոտությունից: Նա մարդկանց վրա
կատարած իր փորձերով մեկ անգամ ևս արա-
ցուցեց և հաստատեց այն, ինչ մի քանի տարի
առաջ արդեն ապացուցել էր Նիկոլը: Է՛լ ավելի
դադանաբար վերաբերվեց մի ուրիշ դերմանա-
կան բժիշկ նույն խմբերիալիստական պատե-
րազմի ժամանակ Թուրքիայում: Որոշելու հա-

մար, թե բժաշկոր տիֆով հիվանդի մաս որակող է գտնվում՝ վարակը, նա արյուն է վերցնում բժաշկոր տիֆով հիվանդներից և ներարկում 310 սառը թուրք զինվորի, որոնցից բժաշկոր տիֆով հիվանդանում է 174 մարդ և զարգացած ծանր բժաշկոր տիֆի հետևանքով մեռնում են 18-ը: Նրանց մեծ մասը հիվանդացավ արյուն ներարկելուց հետո 12—14 օր անց:

Նույնը ապացուցեց նաև ուրա գիտնական պրոֆ. Մոչուևսկովսկին, սակայն ի տարբերություն գերմանական բժիշկներից, պրոֆ. Մոչուևսկովսկին արյուն է վերցնում բժաշկոր տիֆով հիվանդից և այդ ներարկում էրեն: 18 օրից հետո նա հիվանդանում է բժաշկոր տիֆի ծանր ձևով: Այս փորձերով անփիճելորեն ապացուցվեց, որ վարակը գտնվում է արյան մեջ, որ վարակը բժաշկոր տիֆով հիվանդից տուղթին է անցնում արյան հետ, որ վարակված մարդը միանգամից չի հիվանդանում բժաշկոր տիֆով, այլ մոտավորապես 12—21 օր անց այն մոմենտից, երբ նրա մեջ է ընկել հիվանդի արյունը և վերջապես, որ վարակի միակ փոխանցողը հանդիսանում է ոչիլը:

Գիտութեան կողմեց ստույգ կերպով հաստատված այս բոլոր փաստերը չափազանց կարեւոր նշանակութեան ունեն ինչպես հիվանդութեանը ճիշտ ուսումնասիրելու, այնպես էլ, սուսանձնապես, բժշակոյր տիֆի դեմ պայքարի նըպատակներէ համար:

Մի բանու՛մ միայն թերութեան կար. դիտնականները երկար ժամանակ չէին կարողանում գտնել բժշակոյր տիֆի միկրոբը—հարուցիչը. բոլոր երկրներէ տասնյակ դիտնականներ անդադրում կերպով շարունակում էին իրենց աշխատանքներն այդ ուղղութեամբ:

Վերջ ի վերջն նրանց այդ որոնումները հաջողութեամբ պատկէցին: Բժշակոյր տիֆի հարուցիչն առաջինը նկարագրեց մեքսիկական դիտնական Ռիկկետսը, իսկ երեք տարի հետո, 1873 թվականին, շարունակելով Ռիկկետսի փորձերը, նույնը նկարագրեց սերբիական դիտնական Պրովաչեկը: Հետագրքրական է, որ այս երկու դիտնականներն էլ իրենց աշխատանքներէ և բժշակոյր տիֆին ուսումնասիրելու ժամանակ վարակվեցին նրանով ու մեռան:

Ի պատիվ բժշակոյր տիֆի զոհ դարձած այդ

զխոնականներն՝ նրանց հայտնագործած բծավոր տիֆի հարուցիչն այժմ կոչվում է «Ռիկկեստի-Պրովաչեկի» :

Ռիկկեստը և Պրովաչեկը բծավոր տիֆի հարուցիչը պահում էին բծավոր տիֆով վարակված ոջիւնների աղիներում . հիվանդի արյունը վարակ է պարունակում արդեն հիվանդանալու առաջին օրերին :

Հենց որ հաստատվեց բծավոր տիֆը ոջիւնների, գլխավորապես շորի ոջիւնների միջոցով փոխանցվելու փաստը, բոլոր երկրների զխոնականներն սկսեցին ուսումնասիրել ոչ միայն փոխանցման եղանակները, այլ և ոջիւնների կյանքի բոլոր կողմերը, դարգացումը, կառուցվածքն ու տարածումը : Այս տեղեկությունները չափազանց էական էին ու կարևոր : Դրա վրա շատ ժամանակ ու արշատանք դրին ինչպես մեր, այնպես էլ մյուս երկրների զխոնականները և ներկայումս կարելի է ասել, որ գիտությունը բավականին լավ է ուսումնասիրել այդ, ըստ երևույթին չափազանց անմեղ, բայց դժբախտաբար մարդու սոսկալի թշնամի պարազիտը : Ոջիւնների ուսումնասիրության դժբախտ հատկա-

պէս շատ բան արին ուսն գլխանականները՝ ա-
կադեմիկոսներ Խորոզկովսկին և Պավլովսկին:

Մարդու մարմնի վրա ապրում են երեք տե-
սակ ոջիլ՝ գլխի, ցայլի և շորի: Առաջին եր-
կու տեսակն ապրում են մազոտ մասերում՝
գլխին, մորուքին և ցայլին. հենց այդ տեղ էլ
նրանք գնում են իրենց ձվերը՝ ամբացնելով
նրանց մազերին: Շորի ոջիլն ապրում է մար-
դու ոչ թե մարմնի, այլ հագուստի վրա, մանա-
վանդ կարերում և ծալքերում: Հենց այդ ծալ-
քերի մեջ էլ նրանք գնում են իրենց ձվերը
(անիծները): Ոջիլները շատ արագ կերպով են
բազմանում և մաքրության ու լողանալու բա-
ցակայության գեպքում մարդ կարող է բոլոր-
ւովին ոջլոտովել, ինչպես այդ նկատվում էր ա-
ռաջին իմպերիալիստական պատերազմի ժամա-
նակ խրամատներում գտնված գինյութների վրա:

Թե մարդու վրա ոջիլներն ինչ չափի կարող
են հասնել, ցույց է տալիս ավստրիական երկու
բժիշկների հաղորդումը: Նրանք գրում են, որ
անցած իմպերիալիստական պատերազմի ժամա-
նակ հիվանդանոցներից մեկի սանիտարները,
այդ հիվանդանոց բերված 120 ուղմազերիները՝

վրայից հավաքել են մոտ 15 կելո ոջիլ, այսինքն միջին հաշվով 130 դրամ ոջիլ յուրաքանչյուրից :

Ոջիլների բուրք երեք տեսակներն էլ, որոնք պարադիտուխյուն են աճում մարդու վրա, ապրում են բացառապես նրա արյունով : Սպիտակեղենի, հազուսաի ծալքերում ապրող շորի ոջիլը սովորաբար օրական 2—3 անգամ անցնում է մարդու մարմնի վրա կերակրվելու համար. ծծելով մոտ 4—7 բուպե, նա նորից վերադառնում է սպիտակեղենի վրա և այնտեղ մնում մինչև հաջորդ կերակրվելը : Դրա շնորհիվ, սովորաբար համարում են, որ շորի ոջիլից ազատվելն ավելի հեշտ է, քան գլխի ոջիլից : Ոջիլների շատ լինելու դեպքում նրանք երևան են դալիս նաև մարդու վերնազգեստի վրա, մանավանդ օձիքի վրա, և այդ ժամանակ վադոններում, մարդկանց կուտակման տեղերում, նեղվածք լինելու ժամանակ նրանք հեշտությամբ են անցնում մեկից մյուսի վրա :

Ոջիլները վերին աստիճանի դիմացկուն են և կենսունակ, նրանք կարող են մինչև 10 օր ապրել առանց սննդի, մինչև 2 օր ապրել ջրի մեջ :

Նրանք չեն դիմանում) բարձր ջերմաստիճանի :
 90—110 աստիճան տաքությունը սպանում է
 նրանց : Նրանց համար ամենևին հաճելի է լի-
 նել 40 աստիճան տաքություն ունեցող հիվան-
 դի վրա , ահա այդ պատճառով էլ , եթե նրա
 կողքին նորմալ տաքություն ունեցող մարդ կա ,
 ոջիլները հաճույքով նրա վրա են անցնում :
 Ոջիլները չեն դիմանում մի քանի դազերի , հո-
 տերի : Ոջիլը չի կարողանում սողալ յուզով օ-
 ծած մաշկի վրա , այդ պատճառով մաշկը յու-
 դերով ու հոտավետ նյութերով օծելը հայտնի
 էր որպես ոջիլներին վախեցնելով վախցնելու
 միջոց և լայնորեն կիրառվում էր դեռևս հնա-
 դույն դարերում : Այսպես , օրինակ , վերջին հա-
 մաճարակի ժամանակ նկատվել էր , որ Բաքվի
 նավթային բանվորները քիչ հիվանդացան բժա-
 վոր տիֆով . ըստ երևույթին նավթի ու կեղո-
 սինի հոտը , յուզոտ մաշկը վախցնում էին ո-
 ջիլներին :

Ոջիլները տարբերում են մարդու հոտը կեն-
 դանու հոտից : Որոշ մարդկանց վրա ոջիլները
 չեն ապրում , որովհետև նրանց մարմնի հոտը
 վանում է ոջիլներին :

Որպեսզի արյունը չմակարդվի և ավելի հեշտ ծծվի, կծելու ժամանակ ոջիլն իր խայթոցի կուրքին զտնված դեղձերից վերքի մեջ է թափում մի հատուկ հեղուկ—թուր: Այս թուրը թունավոր է, դրդուում է մաշկը, այդ պատճառով դեպի կծած տեղը շատ արյուն է հոսում և կարմրում է, միաժամանակ առաջացնում է նաև քոր, իսկ քորած տեղում զարդանում են զանազան մաշկային հիվանդություններ:

Արյան հետ միասին ոջիլը բծավոր տիֆով հիվանդից իր աղիների մեջ է բնդունում վարակ, այսինքն միկրոբներ: Միկրոբներն այնտեղ չեն ոչնչանում, ինչպես այդ նկատվում է լվի, փայտջիլի մոտ, այլ ուժգին կերպով զարգանում են:

Սրանից հետևում է, որ շորի ոջիլը հանդիսանում է ոչ միայն բծավոր տիֆի վարակի հասարակ մեխանիկական փոխանցողը, այլև նրա իսկահան միջակա տերը և բծավոր տիֆով հիվանդի արյունը ծծած շորի ոջիլը սովորաբար ինքը հիվանդանում է բծավոր տիֆով: Նիկոլի, իսկ այնուհետև ուրիշ գիտնականների հե-

տազա փորձերով հաստատվեց նաև այն, որ
Հիվանդից արյուն ծծած ոջիլը միանգամից չի
Հիվանդանում ու վտանգավոր դառնում մարդու
համար, այլ միայն 3—5 օրից հետո, այնու-
հետև մինչև իր կյանքի վերջը, մոտ 3—4 շա-
բաթ պահում է իր վարակելիութունը: Են-
թադրվում է, որ այսպիսի վարակված մեկ ո-
ջիլի խայթոցը բավական է բժավոր տիֆ առա-
ջացնելու համար:

Ճիշտ է, մեծ համաճարակի ժամանակ Հի-
վանդների և միաժամանակ ոջիլոս Հիվանդների
մեջ ապրողներից և նրանց խնամողներից ոմանք
մինչև վերջն էլ առողջ են մնում, չնայած շա-
րունակ ոջիլներ են վերցնում իրենց վրայից.
այդ բանը բացատրվում է նրանով, որ տվյալ
մարդն ունի բնական անդդաշունակութուն,
ինչպես մենք ասում ենք՝ իմունիտետ ունի:
Այսպիսի մարդիկ չափազանց քիչ են, կամ հնա-
բավոր է, որ նրանք մանկական հասակում,
անցյալներում արդեն տարել են այդ վարակը:

Բժավոր տիֆով մեկ անգամ հիվանդացած
մարդը, սրպես կանոն, երկրորդ անգամ չի հի-
վանդանում այդ հիվանդությամբ, ինչքան էլ

որ նրան ծծեն վարակված ոջիլների: Նշանակում է նրա օրգանիզմում հաստատուն խմունիտեա է գոյանում: Սակայն լինում է և այսպես, որ, չնայած շուրջը մոլեգնող համաճարակին, Երևէ մեկը ևրկար ժամանակ չի վարակվում, բայց վերջ ի վերջո նա ևս վարակվում է ու հիվանդանում: Այսպիսի դեպքեր հաճախ էին նկատվում 1918—1921 թվականների համաճարակի ժամանակ:

Այսպիսով մենք արդեն դիտենք, որ բծավոր ախճը հիվանդից առողջ մարդուն է անցնում շորի ոջլի կծելու միջոցով, բայց անհրաժեշտ է նաև լավ հիշել և դիտենալ, որ վասնդավոր են ոչ միայն ոջիլները, այլ և նրանց անիծները, որոնցից դուրս են դալիս նոր պարազիտներ: Հաստատված է նաև, որ մարդ կարող է վարակվել ոչ միայն վարակված ոջլի կծելու միջոցով, այլ և նրան ճիւղելու և մաշկի փոքրիկ վերքերին քսելու միջոցով, որ հաճախ տեղի է ունենում շանդովածքների և մաշկային փոքրիկ վերքերի դեպքում:

Եվ այսպես, այն, ինչ սրանից 15—20 տարի առաջ դեռևս վիճելի էր, այժմ պարզ ու անվի-

ճելի է դարձել: Պատերազմի դառն փորձով
մենք համոզվեցինք, որ բծավոր տիֆի տարած-
ման գործում ոջիլների ունեցած դերի մասին
գիտնական նիկոլի գիտողությունները ճիշտ
էին:

Ոջիլների դերը պարզեցու հետ միասին սկսե-
ցին մշակել և տալ նաև ոջլոտության դեմ
պայքարի միջոցները: Արդեն գոյություն ունի
միջոցառումների մի ամբողջ սխեմա, որի նը-
պատակն է բնակչությանն ազատել այդ վտան-
գավոր պարազիտներից: Եվ եթե դեռ մոտիկ
անցյալում ոջիլը մեզ մոտ, մանավանդ գյու-
ղացիական բնակչության մեջ կենցաղային ե-
րեվույթ էր հանդիսանում, ապա այժմ կյանքի
նոր կառուցվածքի, երկրի սանիտարական կուլ-
տուրայի բարձրացման պայմաններում, ոջիլն ու
բծավոր տիֆը պետք է անցնեն անցյալի դիրկը:
Սովետական Միության մեջ նրանք տեղ չպետք
է ունենան, պետք է անհաշտ պայքար հայտա-
բարել նրանց դեմ:

4. ԻՆՉՊԵՍ Է ԸՆԹԱՆՈՒՄ ԲԾԱՎՈՐ ՏԻՖՆ

Ողբի կժեւու միջոցով վարակված մարդը միանգամից չի հիվանդանում բժամոր տիֆով: Վարակվելու, այսինքն ողբի կժեւու և հիվանդութեան առաջին հատկանիշների երեան դաւու միջև անցնում է 12—21 օր. այս դադտնի շրջանը, երբ ինֆեկցիան—միկրոբներն օրդանիդմում հասունանում և բազմանում են, կոչվում է ինկուբացիոն շրջան: Ճիշտ է, այս դադտնի շրջանի վերջին օրերին մի քանի հիվանդներ ցուցաբերում են թեթև հոգնածութիւն, ընկած տրամադրութիւն, վատ քուն, դիւսացաւ, ցաւեր դոտկատեղում և այլն, բայց այդ սովորաբար թույլ արտահայտված երևույթներէ վրա քիչ ուշադրութիւն են դարձնում:

Այս շրջանից հետո հիվանդութիւնը միանգամից սկսվում է ուժեղ դողով, ջերմաստիճանի բարձրացումով ու դիւսացաւով: Ջերմութիւնն արագ կերպով հասնում է մինչ 39—40 և այլևի բարձր աստիճանի և այդ թվերի վրա մնում է մինչև հիվանդութեան վերջը, միջին հաշվով 12—14 օր: Բոլոր հիվանդները, շատ

Հազվադեպ բացառութեամբ, Հիվանդութեան
 առաջին օրերից դանդատվում են տանջալի դը-
 խացավերից: Ծառ շուտով այդ ցավերին միա-
 նում են ստորին վերջուլթիւների, մանավանդ
 սրունքճնկնային մկանների և դոտկատեղի ցա-
 վերը: 4—5-րդ օրը ցան է երևում սկզբում
 կրծքի, փորի վրա, այնտեղից անցնում է մեջ-
 քի և վերջուլթիւների վրա: Յանն սկզբում զար-
 դանում է քորոցի դիտի մեծութեամբ, աստիճա-
 նաբար անցնելով հեմորրոգիայի: Հազվադեպ է
 լինում, որ բժավոր տիճով Հիվանդի վրա ցան
 չլինի: Այս ցանը հեշտութեամբ է աչքի ընկ-
 նում, հեշտ է տարբերել ուրիշ Հիվանդութեան-
 ների, ինչպես օրինակ՝ քութեչի, կարմրուկի,
 որովայնատիճի ժամանակ եղած ցաներից, այդ
 պատճառով դիագնոզը որոշելու համար այս
 ախտանիշը շատ արժեքավոր է բժիշկի համար:

Հիվանդի դեմքը կարմիր է, շնչառութեանն ու
 պուլսը արագացած: Հիվանդի դրութեանն օրե-
 ցօր ավելի ու ավելի վատթարանում է: Խորը
 խանգարումներ են նկատվում կենտրոնական
 ներվային սխտեմում: Արդեն առաջին օրե-
 րից սկսված համառ գլխացավը, անքնութեան-

նը, շատախոսությունը, հուզմունքը, երբեմն
 հիվանդի հոգեկան անհանգիստ վիճակը երկրորդ
 շարաթվա սկզբից աստիճանաբար փոխարինվում
 է քնկոտությամբ, ուժասպառությամբ և դի-
 տակցության կորուստով: Այս շրջանում սրտի
 դործունեությունն ավելի է վատանում. հիվան-
 դը շատ ծանր հիվանդի տպավորություն է
 թողնում: Այս ծանր պատկերն օրգանիզմի թու-
 նավորման արդյունքն է այն թուլյանցով, որոնք
 այդ ժամանակ արտադրում են հիվանդի արյան
 մեջ և դաժ հսկայական քանակությամբ բծավոր
 տիֆի միկրոբները: Այս թուլյանքը դանվելով
 արյան շրջանառության մեջ՝ թունավորում են
 բոլոր օրգանները—երիկամները, Լյարդը, թո-
 քերը, բայց առանձնապես ուժեղ կերպով այն
 անոթների պատերը, որոնց միջով հոսում է
 արյունը, սիրտը և ներվային սխտեմը:

Այսպիսի ծանր դրությունը բծավոր տիֆի
 ժամանակ շարունակվում է մոտ 2 շաբաթ, ո-
 բից հետո, եթե ոչ մի բարդություն չի լի-
 նում, ջերմությունը 1 կամ 2—3 օրվա ընթաց-
 քում ընկնում է մինչև նորման, քիտակցու-
 թյունը պարզվում է, ցանք դունատվում և

անհետանում է, աստիճանաբար նվազում են բո-
լոր ծանր ախտանիշները և հիվանդն սկսում է
կամաց-կամաց կաղդուրվել: Սակայն առողջու-
թյան լրիվ վերականգնումը շուտ չի լինում:
Միայն ջերմությունն ընկնելուց 2—3 շաբաթ
անց հիվանդն ի վիճակի է թողնել անկողինը:
Այդ դեռ հիվանդության թեթև ու միջակ ձևե-
րի դեպքում, իսկ ծանր դեպքերից հետո ապա-
քինումը երբեմն ձգձգվում է 2—3 ամիս և ավելի:
Եվ այս բոլորը մի ոջլի կծեւու հետե-
վանքով:

Բժափոր տիֆի ծանր դեպքերը զանազան բար-
դություններ են տալիս՝ թոքերի, երիկամների
բորբոքում, ուղեղի բորբոքում. և յուրաքան-
չյուր այդ բարդություններից հիվանդը կարող
է մահանալ, իսկ առողջանալու դեպքում, ամեն
մի բարդությունից հետո նրա մոտ կարող
են հետքեր մնալ ամբողջ կյանքի ընթացքում:

Բժափոր տիֆով հիվանդանում են բոլորը,
թե՛ ծերերը և թե՛ երիտասարդները: Երեխա-
ներն, այնուամենայնիվ, ավելի սպակաս: Հի-
վանդանում են առավելապես աշխատանքային,
երիտասարդ հասակում, այսինքն նրանք, որոնք

ավելի շատ են հանդիպում միմյանց, ճանապարհորդում են երկաթուղիներով, մասնակցում են պատերազմներին և այլն: Երեխաների մահացությունն աննշան է. միջին հասակում մահացության տոկոսը բարձրանում է, 40 տարեկանից սկսած հիվանդները տալիս են մահացության բարձր տոկոս: Ընդհանրապես կարելի է ասել, որ քան ավելի առողջ ու ամբողջացած է մարդ, որքան ավելի քիչ է հյուծված նախընթաց հիվանդություններից, կյանքի ծանրությունից, թերսնումից, այնքան ավելի շատ են առողջանալու շանսերը, այնքան օրգանիզմն ավելի հեշտ է հաղթահարում բժավոր տիֆի վարակին: Բժավոր տիֆն առանձնապես վտանգավոր է ողելից խմիչքներ զործածող մարդկանց համար: Հաստատված է, որ մահացությունը բժավոր տիֆից հատկապես մեծ է խլմողների մեջ: Հաստատված է, որ աղամարդիկ բժավոր տիֆն ավելի դժվարությամբ են տանում, քան կանայք: Մահացության տոկոսի տեսակետից, ինքնին հասկանալի է, որ մեծ նշանակություն ունեն համապատասխան խնամքը և պայմանները: Հիվանդը որքան շուտ է

ընկնու՞մ լավ բարեկարգ հիվանդանոց, որտեղ
նա պատշաճ, լավ ու ժամանակին խնամք և
բուժում է ստանում, բնականաբար այնքան ա-
վելի ցածր է մահացությունը:

Բժափոր տիֆոյ մեկ անգամ հիվանդած
մարդն այլևս նրանով չի հիվանդանում, խեղ
եթե լինում են երկրորդ անգամ հիվանդանալու
դեպքեր, ապա չափադանց հաղվադեպ:

Սովորաբար բժափոր տիֆոյ հիվանդանում են
ձմռանը, խեղ համաճարակները դարդանում են
ձմեռվա երկրորդ կեսին և դարձան սկզբին:
Այս հանդամանքը բացատրվում է բացառապես
նրանով, որ ձմռանը, ցուրտ եղանակին մար-
դիկ կուտակված են աղբում, միատին քնում,
տաք հաղնում և այդ պատճառով ստեղծվում
են սջիլների աղբելու, բաղմանալու և տարած-
վելու բոչոր պայմանները, ախրնքն մեկից
մյուսին հեշտությամբ անցնելու հնարավորու-
թյունը:

Եթե բժափոր տիֆը նորմալ է բնթանում,
նրան ճանաչելը դժվար է: Դժվար է լինում
որոշել բժափոր տիֆի եղակի և առաջին դեպ-
քերը, եթե ավյալ վայրում դեռ չկա բժափոր

տիֆլի դրանցոված ոչ մի դեպք: Այդ պատճառով
Համաճարակի սկզբին և Հիվանդության առա-
ջին օրերին բժավոր տիֆլի ստույգ դիագնոզը
չթվար է և որոշ փորձառություն ու հմաու-
թյուն է պահանջում բժշկից: Իսկ թե որ-
քան կարևոր է Հիվանդության առաջին դեպ-
քերը բաց չթողնելը, որքան կարելի է
վաղ դիագնոզելը, արագ կերպով մեղաց
ձևը առնելը. Հիվանդին մեկուսացնելու,
նրա մրայի ոջիլները ոչնչացնելու համար, այդ
ինքնին հասկանալի է: Ամենից ավելի հաճախ
բժավոր տիֆը շփոթում են որովայնատիֆի,
պարատիֆի, հետադարձ տիֆի, մալարիայի,
սեպտիա, կարմրուկի, մենինգիտի և դարձյալ
մի քանի ուրիշ Հիվանդությունների հետ, ո-
րոնք առաջին օրերին կարող են տալ բժավոր
տիֆին մոտավորապես նմանցող Հիվանդության
պատկեր: Բժավոր տիֆի օգտին է խոսում, ան-
շուշտ, հանկարծակի սկսվելը, շատ ուժեղ դըլ-
իացավը, որն առանձնապես սաստկանում է
4—5-րդ օրը, ցանը: Բայց, ինչպես արդեն ա-
սացինք, լինում են դեպքեր, երբ այդ ախտա-
նիշները լավ արտահայտված չեն լինում և այդ

Ժամանակ դիտարկողը դժեւու գործում վճռական
 դեր է խաղում հիվանդի հետագա դիտողու-
 թյունն ու արյան հետազոտութիւնը՝ Վեյլ-
 Ֆելիքսի սեղանային միջոցով: Այս սեղանային
 հիշեցնում է որովայնատիֆի ժամանակ եղած
 սեղանային, որը զգալիորեն ավելի վաղ հայտ-
 նագործել է Փրանսիացի դիտնական Վիդալը:
 Դա կայանում է նրանում, որ եթէ որովայնա-
 տիֆով հիվանդից վերցնենք մոտ 2—3 թեյի
 գդալ արյուն և թողնենք, որ մակարդալի, կը-
 տեսնենք թափանցիկ, թեթեակի դեղնավուն մի
 հեղուկ—չիճուկ: Եվ ահա, որովայնատիֆով հի-
 վանդի այս չիճուկը, խառնված լինելով որո-
 վայնատիֆ առաջացնող միկրոբների հետ, ազ-
 դում է նրանց վրա և շատ շուտով կազմում
 մեկը մյուսին, որ լավ նկատելի է միկրոսկոպի
 տակ: Իսկ եթե չի կազմում, նշանակում է
 սովյալ հիվանդը, որից արյուն է վերցրած, ո-
 թովայնատիֆով հիվանդ չէ: Նույն բանն արին
 ավստրիական երկու բժիշկ Վեյլը և Ֆելիքսը
 1915 թվականին իմպերիալիստական պատերազ-
 մի ժամանակ: Նրանք բժատոր տիֆով հիվան-
 դի մեղից դատեցին հատուկ միկրոբ, որը կըպ-

չում է բժաշտը ախտով հիվանդի արյան շե-
նուկ ավելացնելուց: Եթե հիվանդը բժաշտը
ախՖ չունի, միկրոբները չեն կոչում, իսկ եթե
կոչում են, նշանակում է նա հիվանդ է բժա-
շտը ախՖով:

Վեյլի և Ծելիքսի այս դյուարը մեծ նշանակու-
թյուն ունի և անգնահատելի ծառայություն է
մատուցում բժիշկներին բոլոր կատիածելի դեպ-
քերում, և, ինչպես արդեն վերն ասացինք, ոչ
միայն կլինիկական նշանակություն ունի, այլ
և նույն չափով նշանակություն ունի հակահա-
մաճարակային միջոցառումների համար բժա-
շտը ախՖի դեմ մղվող պայքարում:

5. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ԲԾԱՎՈՐ ՏԻՖՈՎ ՇԻՎԱՆԴՍՅԱՍԻ ՇԵՏ

Յուրաքանչյուր բժաշտը ախՖով հիվանդի
անհրաժեշտ է անմիջապես տեղափոխել հատուկ
հիվանդանոցում: Այդ անհրաժեշտ է, նախ հենց
իր՝ հիվանդի համար, որովհետև տանն ինչքան
էլ լավ խնամեն, այնուամենայնիվ հատուկ

բուժական հիմնարկում խնամքն ու բուժումն ավելի լավ կլինի, որն ապահովում է նաև ամեն տեսակի բարդություններից և՛ բարձրացնում առողջանալու շանսերը, խի երկրորդ, որը ոչ պակաս կարևոր է, հիվանդանոց տեղափոխված բժափոր տիֆոյի հիվանդն անվտանգ է դառնում չրջապատողներին համար:

Մնալով տանը, մանավանդ չքափորների մոտ, որոնք ապրում են մի նեղվածք սենյակում, կարողութ ավյալները, որ նա կվարակի իր ընտանիքի անդամներին, խի եթե նա միաժամանակ և մոլեղնում է կամ կորցրել է գիտակցությունը, այս դեպքում այդպիսի հիվանդի խնամքն ավելի է դժվարանում և գրեթե անխմատ է տանը պահելը: Այդպիսի հիվանդին ոչ մի բույե չի կարելի մենակ թողնել և հաճախ հարկ է վնում, որ մոտիկ ազդականները թողնեն իրենց աշխատանքը, ծառայության չզնան և դիչեր-ցերեկ միայն հիվանդին խնամեն:

Ահա թե ինչու, կրկնում ենք, բժափոր տիֆոյի հիվանդին անհրաժեչա է անմիջապես հիվանդանոց տեղափոխել: Հիվանդանոցներում հատուկ հարմարանքներ ու շնքեր պետք է վի-

նեն հիվանդներին մաքրելու, միջատները ոչըն-
չացնելու և բժշկական անձնակազմին վարակ-
վելու հնարավորութունից պաշտպանելու նպա-
տակով միջոցներ ձեռք առնելու համար: Հի-
վանդանոցում խնամող բժշկական աշխատողը,
սանիտարից սկսած մինչև բժիշկը, պետք է
նախապես լավ հրահանգված լինի բոլոր պար-
տադիր կանոնների մասին:

Հիմնական կանոնը հիվանդին պարազելտից
ապատելն է, եթե նա կա: Այս նպատակով յու-
րաքանչյուր ընդունվող հիվանդ պետք է հա-
մապատասխան կարգով սանիտարական մշակ-
ման ենթարկված լինի—մազերը կարճ խուլած,
սապոնով ու տաք ջրով լողացած, մաքուր սպի-
տակեղեն հագած և դրանից հետո միայն հի-
վանդասրահում տեղավորված: Հիվանդի ամ-
բողջ սպիտակեղենն ու հագուստն ուղարկվում
է դեղինսեկցիայի և դեղինֆեկցիայի: Բժշկա-
կան անձնակազմը պետք է ունենա հատուկ խա-
լաթներ, դիխաչորեր, կրկնակոշիկներ: Բժավոր
տիֆով հիվանդների բոլոր խնամողներին հանձ-
նարարվում է հաճախ ընդունել վանճաներ սա-
պոնով, մանավանդ տուն գնալուց առաջ և ա-

վելի հաճախ փոխել սպիտակ դեմքը, հիշելով, որ մարմնի և հագուստի մաքրությունը լավագույն երաշխիքն է բժավոր տիֆոյ վարակիչիւնը դեմ :

6. ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԲԺՇԿԵԼ ԲԾԱՎՈՐ ՏԻՖՈՎ ՀԻՎԱՆԴԻՆ

Առայժմ չկան այնպիսի դեղեր, որոնք միանգամից բուժեն բժավոր տիֆոյ հիվանդին, ուստի բժավոր տիֆոյ հիվանդի բուժումը կատարվում է այն միջոցների գործադրումով, որոնք թեթևացնում, բարելավում են հիվանդի լինքնազգացությունը և սահալում են նրա սրտի աշխատանքը: Բոլոր միջոցառումների մեջ ամենազլխավորն է՝ հիվանդի համար ստեղծել հիգիենիկ պայմաններ և համապատասխան խնամք: Հիվանդի սենյակը պետք է լինի մեծ, լավ օդավռիվող, սենյակում ավելորդ իրեր չպետք է լինեն: Հատուկ ուշադրությամբ պետք է հետևել հիվանդի բերնի խոռոչի մաքրությանը: Վատ խնամքի դեպքում այստեղ կարող են առաջանալ բարդություններ առաջանալ: Որ-

քան կարելի է շատ խմելիք տալ Հիվանդին
(կարելի է օրական մինչև 10—12 բաժակ) :
Սմած հեղուկը՝ ջուրը, թեյը, կաթը, թթվաշ
ջուրը և այլն նոսրացնում են օրգանիզմում ե-
ղած թույները և այդ հանդամանքը հեշտաց-
նում է նրանց արտադրությունը երիկամների
միջոցով :

Հիվանդին պետք է լավ սնել : Ավելի լավ է
փոքր բաժիններով, բայց հաճախակի, առավե-
րապես հեղուկ և կիսահեղուկ սննդով : Լա-
վադույն սնունդը հանդիսանում է կաթը դա-
նազան ձևերով, հատկապես՝ կարելի է հանձ-
նարարել մածուց և թան : Սրանք, բացի սննդա-
բար նշանակությունից, երբ սառը վիճակում են
տրվում, հրաշալի համեղ և դավաջուցիչ միջոց
են տենդոզ հիվանդի համար : Բուժական ուրիշ
պրոցեդուրաների շարքում աչքի ընկնող տեղ է
զբաղում ջրարուժումը, որը շատ բարեբար ազ-
դեցություն է ունենում հիվանդի ընդհանուր
ինքնազգացության վրա և հատկապես լավ ազ-
դեցություն է ունենում ներվային ու սիրտա-
նոթային սխտեմի վրա : Ջուրը գործարկում
է շփելու, թաց սավանի մեջ փաթաթելու,

դիւրիւր կամ ամբողջ մարմինը ջրցանեւու և վերջնապես 35—36° C դուր վաննաներ տալու ձեռով: Այս բոլոր ջրային սլոցեղուքաները թուլացնում են դիւրացաւերը, պարզեցնում են դիտակցութիւնը, նվազեցնում զստանցանքն ու հուզմունքը և բարելաւում են շնչատութիւնն ու ընդհանուր ինքնադիացութիւնը: Բացի դրանից, հանձնարարվում է հիվանդի դիւրին ստուուց դնել հատուկ փուչիկով:

Սակայն բուժող բժշկի հատուկ ուշադրութիւնն են պահանջում հիվանդի սիրտն ու ալիւնատար անոթները, ինչպես նաև ներվային սխտեմը: Ատիճանաբար աճող թուլութիւնը բժաւոր տիֆով շատ հիվանդների մոտ ամենից ավելի սպառնալից ու վտանգաւոր երևույթ է համարվում:

Բժիշկը միշտ պետք է պատրաստ լինի, որ պետքի հարկաւոր պահին օդնութիւն հասնի հիվանդի հոգնած սրտին: Դրա համար մենք ունենք միջոցներ թի հարուստ արտենալ, ինչպես՝ կամֆորա, կոֆեին, դիլիտալիս, սորիլինն և այլն: Բժաւոր տիֆի ընթացքում կղած բոլոր բարդութիւնները բուժվում են սխտու-

մատիկ կերպով ընդհանուր կանոնների համա-
ձայն :

7. ԻՆՉՊԵ՝Ս ԱԶԱՏԿԵԼ ԲԾԱՎՈՐ ՏԻՖԻՑ

Կան հիվանդություններ, որոնցից ազատվելը
կախված է հենց իրենցից՝ բնակչությունից :
Այսպիսի հիվանդությունների թվին է պատկա-
նում նաև բժափոր տիֆը :

Ստալինյան հնդամյակների ընթացքում ար-
մատապես փոխվել է մեր ամբողջ երկրի՝ թե
քաղաքի և թե դյուղի դեմքը : Այժմ պայման-
ները բոլորովին այլ են. այժմ հերթի է դրված
բժափոր տիֆի նույնիսկ առանձին դեպքերի լիա-
կատար վերացումը : Սովետական բժշկականու-
թյունն այնպիսի բժշկականություն է, որը
ձգտում է կանխել հիվանդությունները. այդ
պատճառով բժափոր տիֆի դեմ պայքարը միշտ
պետք է սկսել առանց սպասելու այդ անկող
հյուրի երևան դալուն :

Մի քանի եվրոպական երկրներ ահա արդեն

մի քանի տարի է, ինչ երկարատե ու սխառ-
մատիկ սլայքարով ազատվել են բծավոր տի-
ֆից: Առայժմ մենք չենք կարող դրանով պար-
ծենալ. մեր պարտքն է ամենակարճ ժամանա-
կամիջոցում ՍՍՌՄ բնակչությանն խստա ազա-
տել ցարխիմի այդ ծանր ժառանգությունից:
Սովետական առողջապահության առաջ խնդիր
է դրված՝ մեր մեծ հայրենիքում արագ կեր-
սով ու լիովին ոչնչացնել բծավոր տիֆը:

Երբ դիտությունը հաստատեց, որ բծավոր
տիֆի միակ փոխանցողը ո՛րք է, դրանից հե-
տո նրա դեմ մղվող պայքարը հեշտացավ: Նշա-
նակում է, բծավոր տիֆը ոչնչացնելու համար
պետք է ոչնչացնել ո՛րքները:

Թե ո՛րքը և թե բծավոր տիֆը վախենում են
մաքրությունից, այստեղից եզրակացություն—
բծավոր տիֆի դեմ մղվող պայքարը նախ և
առաջ պայքար է հանուն կուլտուրայի, հանուն
բնակչության ասնխտարական բարեկեցության:

Բծավոր տիֆի փոխանցման միջոցը դանդաղ,
մեղ արդեն ծանոթ դիտնական նիկոլն ասում
էր— «Ձկա բծավոր տիֆի դեմ պայքարի սուկե-

լի պարզ միջոց, քան ջուրը, սապոնը և սպիտակեղենը» : Մի ուրիշ դիտնական ավելացնում է «Մարդը և կեղտը երբևէ չեն հաշտվում, կամ մարդն է նրան ոչնչացնում, կամ նա է մարդուն հաղթահարում» :

Եվ այսպես, առանց ոջիլի չկա բծավոր տիֆ : Ոջիլը բուն է դնում այնտեղ, որտեղ կա կեղտ, անկուլտուրականութուն : Ուզում ես ոչնչացնել բծավոր տիֆը, ոչնչացրու կեղտը, անկուլտուրականութունը և նրա հետ կապված ոջլոտութունը :

Մեր սովետական դյուղը դարձել է կուլեկտիվ, սոցիալիստական : կուլխոզային կարգն ապահովել է բազմամիլիոն բնակչության ունևոր կյանքը : Ունևորության հետ աճում է նաև կուլտուրան, ուստի սովետական նոր դյուղի համար անհաղթահարելի չեն չին դյուղի թշնամիները—ոջիլն ու բծավոր տիֆը, եթե այդպիսիք լինեն :

Բոլոր կուլխոզները և սովխոզներն առաջին հերթին պետք է իրենց մոտ կաղմակերպեն սահմանարանի բժիշկների ցուցումներով կառուցված լավ բաղնիք ու լվացքատուն : Հասարակա-

կան բաղնիքը դյուղում, կոլխոզում՝ սանիտա-
րական միջիմուծի դիսպոզիոր պահանջները մեկն
է: Սակայն բաղնիք կառուցելը բավական չէ,
հարկավոր է, որ բնակչությունը սիրի լողա-
նալ, որ բնակչության մեջ լինի մաքրասիրտ-
թյան պահանջ ու սովորություն: Լողանալու,
անձնական հիգիենայի կանոնները պահպանելու
այդ սովորությունը, այդ սերն ամեն կերպ
պետք է դարդացնել ու արժատացնել մասոս-
ների մեջ մշտական լայն բացատրական աշխա-
տանքով— դասախոսություններով, զբույցնե-
րով, կլինոցուցադրումներով, մամուլի միջոցով
և այլն:

Նոր բաղնիքների շինարարությունն այնպես
պետք է ծավալել, որ յուրաքանչյուր կոլխոզ
ունենա իր բաղնիքը: Սակայն լավ է այնպիսի
տիպի բաղնիք կառուցել, որտեղ միաժամանակ
լողանում են և իբերը գեղինակիցիայի ենթար-
կում: Բաղնիքների անխափան աշխատանքի հա-
մար նրանց պետք է ապահովել վառելիքով
ու ջրով և նշանակել մի անձնավորություն, որը
պատասխանատու լինի բաղնիքի աշխատանքի և

նրան պատշաճ մաքրութեան մեջ պահելու համար:

Անհրաժեշտ է բավականաչափ սապոն մատակարարել բնակչութեանը, որովհետև կուլտուրականութեան բարձրացման հետ միասին մեր մասսաների մեջ բարձրացել է նաև սապնի պահանջը: Անձնական հիգիենայի համար և որպես հիվանդութիւնը կանխելու միջոց, պակաս կարևոր չէ սպիտակեղենը հաճախ փոխելը: Սպիտակեղենն ուշ-ուշ փոխելը սջլտութեան պատճառներէց մեկն է:

Ինքնին հասկանալի է, որ կարևոր բժշկա-սանիտարական միջոցներից մեկն էլ հանդիսանում է բժշկական օգնութիւնը բնակչութեանը մուսկուլները և մշտական հսկողութիւնը մանալանդայնտեղ, որակի մարդիկ են կուլտակում—նորակառույցներ, հանրակացարաններ, բարաքներ, քարվանսարայրներ, արգելարաններ, մանկական հիմնարկներ, դպրոցներ և այլն:

Ամենուրեք, որպես հիմնական պահանջ, պետք է առաջ քաշվի բաղնիքների, լվացքասաների, դեզինֆեկցիոն կամերաների, վարսավերանոցների ցանցի պարտադիր կազմակեր-

պուճը և ամեն մի նոր եկածի սանխտարական
մշակումը: Նույն չափով հաճախակի դեղին-
սեկցիաներ պետք է կատարվեն երկաթուղու
կայարաններում, վազոններում, տրամվայնե-
րում, դպրոցներում, դրանոջներում և այլն:

Մյուս կարևոր միջոցառումը հանդիսանում է
դեպքի արագ հայտարերումը և հիվանդի արագ
հոսպիտալացումը: Հիվանդը՝ որքան շուտ մե-
կուսացվի շրջապատողներից, այնքան ավելի քիչ
կլինի վարակի տարածման վտանգը: Կանոնա-
վոր կերպով և բոլոր կանոնների համաձայն
սանխտարական մշակման ենթարկված, այսինքն
ոջիլներից ազատված հիվանդը ոչ ոքի համար
այլևս ոչ մի վտանգ չի ներկայացնում: Հի-
վանդին հիվանդանոց տեղափոխելուց հետո այն
բնակարանը, որտեղ պառկած է եղել նա, պետք
է ուշադիր կերպով դեղինսեկցիայի ենթարկել,
խսկ բնակարանում մնացողների վրա սանխտա-
րական հսկողութուն սահմանել՝ հիվանդու-
թյան հնարավոր նոր դեպքերը ժամանակից
հայտարերելու համար:

Բժավոր տիֆը կանխելու և սանխտարական
միջոցառումը պահպանելու աշխատանքին պետք է

մասնակից դարձնել նաև կազմակերպված հասարակայնությանը— հասարակական սանիտարական լիազորներին, կոլխոզային քույրերին, սանիտարական բրիգադաներին, դպրոցական ակտիվին, սանիտարական պոստերին և կարմիր խաչի ակտիվին:

Ոջիվներին ոչնչացնելու համար դոյություն ունեն բազմաթիվ միջոցներ ու եղանակներ: Սակայն այդ միջոցներից ու եղանակներից որն էլ որ դործադրվի, հարկավոր է լավ հիշել, որ ոջիվների դեմ մղվող պայքարը պետք է տարվի սխառեմատիկորեն ու պլանաչափորեն: Ոջիվներին սպանող մի քանի միջոցներ միշտ էլ անիծեներին չեն սպանում և եթե վերջիններս մնում են, 4—6 օրվա ընթացքում նրանցից թրթուրններ են դուրս գալիս: Թրթուրը երեք անգամ մաշկափոխվում է, այսինքն փոխում է մաշկը, որից հետո վեր է ածվում հասուն ձևի: Նպաստավոր պայմաններում ոջլի դարդացման ցիկլը տևում է միջին հաշվով 14-ից մինչև 20 օր: Շորի ոջլի սեռաձև հասուն կյանքի առավելագույն տևողությունն է 46 օր, իսկ գլխի ոջլինը՝ 88 օր:

Շորի էդ ոջլիլը դնում է օրական 6—14 անիծ, իսկ իր ամբողջ կյանքի ընթացքում նա կարող է դնել 200—ից մինչև 300 անիծ: Գլխի էդ ոջլիլը դնում է օրական ոչ ավելի, քան 4 անիծ, իսկ ամբողջ կյանքի ընթացքում մինչև 140 անիծ: Անիծ դնելու համար լավագույն ջերմատիճանն է +32:

Այդ պատճառով ոջլիլներին ոչնչացնելու համար դործադրվող միջոցները պետք է կրկնել որոշ կարճ ժամանակամիջոց անցնելուց հետո և այդ դեպքում միայն կարելի է վստահել հաջողությանը:

Ամեն մի տեսակ պարազիտի, այդ թվում նաև ոջլիլների ոչնչացման լավագույն միջոցը Ֆիդիկականն է—բարձր ջերմությունը: 100—110° C հոսող դուրը ին 10—15 բոսկի ընթացքում և 90—110° C տաք օդը 20—30 բոսկի ընթացքում սպանում է ոջլիլներին: Ֆիդիկական միջոցներով ոջլիլներին և անիծներին ոչնչացնում են հատուկ կամերաներում (ոջլասպան-вогнебойка) կամ տնային միջոցներով: Լավ ոջլասպան-կամերա էժան ու հասարակ ձևով կարելի է պատրաստել կոլիտոլում: Կան և ա-

վելի բարդ ու ավելի էֆեկտալող կամերաներ—
դեզինսակցիոն կամերաներ, որոնք աշխատում
են հոսուն տաք օդով կամ դուրըչիով: Դեզին-
սեկտորների և կամերաների սահասուլթյան
դեպքում, մանավանդ դյուղական վայրերում,
չպետք է խուսափել դեզինսակցիայի ավելի
պարզ ու հասարակ միջոցներից:

Այս նպատակով, մեզ թվում է, կարելի կլինի
օգտագործել մեր թոնիրը. դյուղական պայման-
ներում նրանք, որպես սլյասպան, արդեն օգ-
տագործվում են մանավանդ ձմռանը: Անհրա-
ժեշտ է միայն սովորեցնել ավելի ճիշտ օգտվել
նրանցից և դրա համար հատուկ մշակված
ցուցումներ ու հրահանգներ տալ:

Ֆիզիկական միջոցներին են պատկանում նաև
սպիտակեղենը կես ժամի չափ եռացնելը (ավելի
լավ է մոխրաջրով), մի քիչ խոնավացրած սպի-
տակեղենի ծալքերն ու հազուստի կարերը տաք
հարթուկով հարթուկելը:

Դեզինսակցիայի մի ուրիշ ձևը քիմիականն է:
Իրերը քիմիական միջոցով կարելի է մշակել
նաև տնային պայմաններում: Այսպես, օրինակ,
լավ արդյունքներ է տալիս Սոլվենտի լուծույթ-

թի (սապնա-սոյլի նստախն քառակի 10% ջրային լուծույթ), լեղուի տաք լուծույթի և այլնի դործադրումը: Դեղինակցիայի ենթակա երեւը դարբում են տաշտի կամ մի ուրիշ ամանի մեջ ու վրան լցնում պատրաստի տաք լուծույթ և թողնում 20—30 րոպե: Դեղինակցիայից հետո սպիտակեղենը լվացվում է սովորական ձևով, ընդ որում, միջատների ոչնչացման համար հետագա եռացում այլևս չի պահանջվում:

Դլխի ոջիւններին ոչնչացնելու համար ավելի լավ է օգտվել նավթից: Մազերը թրջում են նավթով և հետո 15 րոպեով պինդ կապում թաշկինակով: Դրանից հետո դլուխը լվանում են տաք ջրով և մազերը սանրում խիտ սանրով:

Իրերի, սպիտակեղենի և դլխի դեղինակցիայի համար առաջարկված են նաև ուրիշ միջոցներ, բայց մենք բերինք միայն ամենից ավելի մատչելիները և լավագույն արդյունք տալողները: Մակայն ինչ միջոց էլ որ դործադրվի, այնուամենայնիվ չպետք է մոռանալ, որ ավելի հեշտ և ավելի դյուրին է ոջիւնների երևան դարը կանխելը, քան նրանց ոչնչացնող միջոցները կի-

րատելը, այսինքն, կենցաղային ոջլոտութեան
դեմ մղվող պայքարում վճռական դերը խաղում
է անձնական հիդիենան—հողատարութիւնը
մարմնի, սպիտակեղենի և հաղուստի մաքրու-
թեան մասին:

Եվ եթե ամբողջ բնակչութիւնը—յուրաքան-
չյուն անձին և քոլորը միասին համառորեն
ու եռանդով կատարեն սանիտարական միջիմու-
մը, պայքարեն հանուն մաքրութեան, հանուն
նոր կյանքի կուլտուրական կառուցվածքի, ա-
պա կարելի է երաշխավորել, որ մենք միան-
դամ ընդմիջտ և անվերադարձ կազատվենք ոջ-
լից, հետեապես և բժաւոր տիճից:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է բժավոր տիֆը 4
2. Բժավոր տիֆի պատմութիւնը 6
3. Ինչպէս է տարածոււմ բժավոր տիֆը 16
4. Ինչպէս է ընթանում բժավոր տիֆը * 32
5. Ի՞նչ պետք է անել բժավոր տիֆով հիվանդացածի
հետ * 40
6. Ինչպէս պետք է բժշկել բժավոր տիֆով հիվանդին 43
7. Ինչպէս ազատվել բժավոր տիֆից 46

Պատ. խմբագիր՝
Գ. Ս. Պ ա պ ո վ յ ա ն

ՎՅ 1026. Պատվեր 74. Տիրած 2000.
Տպագրական 3½ մամ. Հեղին. 1,40 մամ. Մեկ
մամուլում 16560 նշան. Ստորագրված է
տպագրության 16/11 1942

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037247

89

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

A $\frac{1}{2491}$